ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԲԻԱՅՆԻԼԻ – ՈՒՐԱՐՏՈՒՈՒՄ

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Բիայնիլի–Ուրարտուում քաղաքաշինության և ամրոցաշինության մասին վկայող ամենավաղ տեքստերը թվագրվում են Իշպուինի Սարդուրորդու իշխանության շրջանով (Ք. ա. մոտ 830–810-ական թվականներ): Վերջին տեքստերը վերաբերում են Արգիշթի Ռուսայորդու և Ռուսա Արգիշթորդու կառավարման տարիներին (Ք. ա. VIII դ. վերջ – VII դ. առաջին կես): Ընդհանուր առմամբ՝ ավելի քան 56 վիմագիր արձանագրություն է հայտնում "ամրոց" (É.GAL) *կառուցելու մասին: "Քաղաք"* (URU/*patari*) *հիմնելու մասին է հայտնում 17 արձանագրություն: Մեզ հասած տեքստերի մեծամասնությունը վերաբերում է Մենուա Իշպուինորդու իշխանության շրջանին (համապատասխանաբար՝ 56-ից 36-ը և 17-ից 9-ը): 5 արձանագրությունում այդ քաղաքներից մի քանիսը հանդես են գալիս* É.BÁRA *անվանումով*[1]*:*

Ուրարտական արքաների թողած արձանագրություններում գերազանցապես վարչական խոշոր կենտրոններն են, որոնք հիշատակվում են անվանապես: Դրանցից առաջինն Իշպուինիի հիմադրած Խալդիի քաղաքն է (^{D}ḫaldini URU)[2]*: Այն հիշատակվում է Քարահանից գտնված կոթողներից մեկում և որը, թերևս, պետք է տարբերակել "Միերի դռան" արձանագրությունից հայտնի Խալդիի քաղաքից* [^{D}ḫaldini(ni) URU)][3]*: Անվանապես հիշատակվող հաջորդ քաղաքը հիմնադրվել է Մենուայի կողմից Արարատյան դաշտավայրի մատույցներում՝ Մեծ Մասիսի մերձավորությամբ, և կրում է արքայի անունը* (^{m}*menuaḫinili*)[4]*: Կարելի է նաև ենթադրել Վանա լճի ավազա-*

---

[1] *Մանրամասն տե՛ս* Y. H. Grekyan. The Settlement Size and Population Estimation of the Urartian Cities.– Bridging Times and Spaces. Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies Honouring Gregory E. Areshian on the Occasion of His Sixty-Fifth Birthday. Oxford, 2017, pp. 103–132, Tab. 1.

[2] M. Salvini. Corpus die testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi (*այսուհետև՝* CTU I).– "Documenta Asiana", VIII/1, 2008, Roma, n. A 2–9A.

[3] Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей (*այսուհետև՝* КУКН). Ереван, 2001, № 38, текст I_{15}, II_{25}; CTU I, A 3–$1_{15, 56}$.

[4] КУКН, 48, 87; CTU I, A 5–26, A 5–27.

նում և մերձուրմյան տարածքներում Մենուախինիլի անունը կրող առնվազն երկու այլ քաղաքի գոյության մասին[5]*:*

Արգիշթի Մենուայորդու օրոք Արարատյան դաշտավայրում հիմնադրվեցին խոշոր կենտրոններ Էրեբունին [URU*er(e)buni*][6] *և Վազա երկրի Արգիշթիխինիլի քաղաքը* (m*argišteḫinili*, m*argištiḫina* m*'azani* KUR-*ni*)[7]*: Արգիշթիխինիլի* (m*argištiḫinili*) *անունով մեկ այլ քաղաք հիմնադրվեց ինչ-որ տեղ՝ Մշո դաշտում կամ մերձավորությամբ*[8]*. հնարավոր է՝ այս անունն է կրել Ներքին Խնձորի (Քայալըդերե) ուրարտական խոշոր ամրոցը*[9]*:*

Երկրում սկիզբ առած լայն քաղաքաշինությունը շարունակեց Սարդուրի Արգիշթորդին՝ հիմնադրելով այնպիսի խոշոր կենտրոն, ինչպիսին էր արքայի անունը կրող Սարդուրիխինիլին (Հայկաբերդ-Չավուշթեփեն)[10]*: Սարդուրիխինիլի* (mDsarduriḫinili) *անունով էլ մեկ այլ քաղաք է հիմնադրվել Աղձնիքում*[11]*:*

Եվս երկու քաղաք է անվանապես հիշատակվում Սարդուրիին հաջորդած Ռուսա Սարդուրորդու արձանագրություններում, այն է՝ Գավառի և Ծովինարի ամրոցները, որոնք կրում էին Խալդիի քաղաք (Dḫaldiei URU) *և Թեյշեբայի քաղաք* (DIM-*i* URU) *անունները*[12]*:*

Ուրարտական արձանագրություններից դատելով՝ Արգիշթի Ռուսայորդու կառուցած ամենախոշոր կենտրոնն արքայի անունը կրող Արգիշթիխինիլի Արտարապշակային է (m*argišteḫinili* KUR*artarapša-kai*)[13]*: Վերջինիս տեղորոշումը, սակայն, դեռևս հստակ չէ, հնարավոր է թվում միայն Արտա-*

---

[5] *Ընդհանուր առմամբ՝ պահպանվել է Մենուախինիլի քաղաքանունը հիշող չորս այլ տեքստ, որոնց հայտնաբերման աշխարհագրությունը, ինչպես նաև տեքստերում առկա մի քանի տեղանուններ հուշում են, որ խոսքն այդ անունը կրող այլ քաղաք(ներ)ի մասին է (տե՛ս* КУКН, 79, 101; CTU I, A 5–23, A 5–24, A 5–25; CTU IV, CB Ay–3*):*

[6] КУКН, 173 II32-34, 174 A214-17, 197–198, 200–201; CTU I, A 8–3 II32-34, A 8–1 Vo14-17, A 8–17 A–B, A 8–18, A 8–19.

[7] КУКН, 173 IV72, 174 B241, 188, 193; CTU I, A 8–2 Ro41', A 8–3 IV72, A 8–14, A 8–16.

[8] CTU I, A 8–22.

[9] R. D a n, M. S a l v i n i. Una probabile fundazione di Argišti I, re di Urartu, sul corso del Murat Su (Eufrate orientale).– "La Parola del Passato", vol. 381, 2011, p. 431–441.

[10] КУКН, 247; CTU I, A 9–17.

[11] CTU I, A 9–18. *Հմմտ. նաև* КУКН, 274 *արձանագրությունը, որի հրատարակիչը ենթադրում է Արճեշի մերձավորությամբ Սարդուրիի անունը կրող մի երրորդ քաղաքի գոյության մասին (հմմտ.* CTU I, A 9–10*):*

[12] *Տե՛ս, համապատասխանաբար,* КУКН, 388–389; CTU I, A 10–1, A 10–2.

[13] КУКН, 406, лиц. стор.4-5; CTU I, A 11–2 Vo4-5.

բապշա լեռը, որի "առջև" կառուցվել էր հիշյալ Արգիշթիխինիլին, նույնացնել Ծաղկանց լեռների որևէ գագաթի հետ[14]*: Արգիշթիի արձանագրություններում նշվում են նաև մի քանի ամրոցներ կառուցելու մասին, որոնք հիշատակվում են անվանապես* (ᴰḫaldiei irdusi, ᵐargištei irdusi) [15]*:*

Քաղաքաշինական վերջին ծրագրերն իրականացվեցին Ռուսա Արգիշթորդու կողմից: Աղբյուրները վկայում են առնվազն չորս խոշոր վարչական կենտրոն հիմնադրելու մասին: Դրանք են՝ Վազա երկրի Թեյշեբայի քաղաքը (ᴰteišebaini/ᴰIM-ni URU, ᵐ'azaini KUR-ni ᵈIM-ni URU – *Կարմիր-բլուր)*[16]*, Ռուսայի փոքր քաղաքը (*ᵐrusai URU.TUR – *Բաստամ)*[17]*, Ջիուկունի երկրի Խալդիի քաղաքը* (ᴰḫaldiei URU ᴷᵁᴿziuquni – *Արծկե/Ադիլջևազ/Քեֆ-Քալեսի)*[18] *և Ռուսախինիլի Էիդուրուկային* (ᵐrusaḫinili ᴷᵁᴿeidurukai – *Այանց/Այանիս)*[19]*: Ինչ վերաբերում է Ռուսախինիլի Կիլբանիկայիին (*ᵐrusaḫinili ᴷᵁᴿqilbanikai – - *Թոփրաքքալե)*[20]*, ապա քաղաքի հիմադրման ժամանակի, ըստ այդմ, նաև՝ հիմնադիր արքայի անձի հարցը դեռևս վիճահարույց է, թեև Ռուսա Էրիմենայորդու թեկնածությունը առավել հիմնավոր է թվում*[21]*:*

Ուրարտական տեքստերը հաճախ են նշում É.GAL*-ի հետ նաև "(նոր) քաղաք" կառուցելու մասին* (… *šidištuni eɣe* É.GAL šuḫi *e'a* URU)[22]*: Նման բովանդակություն ունեն առնվազն 11 տեքստ*[23]*: Առկա տվյալներից դատելով՝ դրանք նկատի ունեն ինչպես ամրոցին կից կառուցված բնակատեղին կամ "արտաքին քաղաք"-ը, այնպես էլ՝ գյուղատիպ բնակավայրերը: Այս առումով կարելի է նշել, որ, հատկապես, ջրանցքներ անցկացնելու կապակցությամբ անվանապես հիշատակվող որոշ "քաղաք"-ներ, ինչպիսիք են, օրինակ՝*

---

[14] M. S a l v i n i. Corpus die testi urartei, vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti nuove iscrizioni su pietra paleografia generale (*այսուհետև՝* CTU IV).– "Documenta Asiana", VIII/4, 2012, Roma, p. 183.

[15] КУКН, 409–410; CTU I, A 11–4, A 11–5, A 11–6.

[16] КУКН, 422, 424; CTU I, A 12–2 I, CTU IV, B 12–15, CB Ay–4.

[17] КУКН, 419; CTU I, A 12–7.

[18] КУКН, 414; CTU I, A 12–4.

[19] CTU I, A 12–1 VI$_{4-9}$, A 12–9$_{1-11}$.

[20] КУКН, 391, 412; CTU I, A 14–1 Ro, CTU IV, CT–Tk-1 Ro.

[21] *Ե. Գ ր ե կ յ ա ն. Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը և ուրարտական արքայացանկը. "Երեք Ռուսաներ"-ի խնդրի շուրջ. – "ՎԷՄ", 2017, թիվ 2 (58), ապրիլ-հունիս, էջ 23–37:*

[22] *Հմմտ. օրինակ՝* КУКН, 75$_{39-31}$, 172a$_{8-10}$; CTU I, A 5–17 Ro$_{39-31}$, A 5–28 Ro$_{8-10}$ *և այլ տեքստերը:*

[23] Y. H. G r e k y a n. *Նշվ. աշխ., էջ 104–105, աղ. 1:*

Ուկուվանին ([URU]*uquχani), Զուգուխեն (*[URU]*zuguḫe), Աբասինին (*[URU]*abasini) և այլն*[24] *բաց, ամրություններից զուրկ գյուղական բնակավայրեր էին:*

Կասկածից դուրս է՝ "սուսի"-տաճարն էր կազմում այն առանցքը, որի շուրջ ձևավորվում էր ուրարտական "քաղաք"-ը (աղ. I, նկ. 1): Որպես կանոն՝ այն կառուցվում էր ամրոցի ամենաբարձր, առավել տեսանելի հատվածում և առանձնանում էր իր մոնումենտալ ճարտարապետությամբ: "Սուսի"-տաճարը շրջապատված էր բացօթյա բակով, տաճարի պաշտամունքային գործառույթների հետ կապված ինչ-ինչ շինություններով[25] *և օժանդակ, գերազանցապես որպես պահեստ կամ մառան ծառայող սրահներով*[26]*:*

"Սուսի"-տաճարից հետո "քաղաք"-ի երկրորդ կարևոր բաղադրիչը, այսպես կոչված, "պալատական" տիպի համալիրն է: Ընդ որում, ուրարտական ճարտարապետության մեջ "պալատ" ասելով ավելի շուտ պետք է նկատի ունենալ ամրոցի հանդիսավոր-վարչական հատվածը, քան առանձին կանգնած ճարտարապետական համալիր[27]*: Այդ երևույթը բնորոշ է հատկապես հյուսիս-միջագետքյան – հյու-սիս-սիրիական-փոքրասիական քաղաքային ճարտարապետությանը*[28]*: Ուրարտուում "պալատ"-ը դա սյունազարդ կամ մույթերով ընդարձակ, հանդիսավոր սրահն էր. չի բացառվում՝* [′É]*ašiḫusi կոչվող կառույցը*[29]*: Այդ անվան համար առաջարկված նոր ստուգաբանությունը վկայում է, որ այն կարող էր լինել "հանդիսությունների սրահ"*[30]*: Նամանավանդ՝* [′É]*ašiḫusi- ի կարևոր նշանակության մասին է վկայում այն փաստը, որ Այանցում հիշյալ կառույցի շինարարության ավարտից հետո նոր տարին անվանակոչվել է այդ իրադարձության անվամբ*[31]*:*

Պալատական տիպի կառույցներ են բացվել, ըստ էության, տերության բոլոր խոշոր կենտրոններում[32]*, նախևառաջ՝ բիայնական մեծ արքաների*

---

[24] КУКН, 77[9-13]; CTU I, A 5–21[9-13].

[25] *Թերևս,* [NA4]*adanusa և* [É]*sir*(*i*) *ḫani*(*ni*) *կոչվող կառույցները, որոնցից վերջինը գտնվել է "սուսի"-ի առջև* (*É*sirḫanini susinika*) (*տե՛ս* CTU I, A 12–1 II[11])*:*

[26] A. B a t m a z. Votive Objects and their Storage Areas in Urartian Fortresses.– "Ancient Near Eastern Studies", vol. 52, 2015, pp. 127–205.

[27] *Տե՛ս և հմմտ.* T. B. F o r b e s. Urartian Architecture. Oxford, 1983, p. 42.

[28] L. A. O p p e n h e i m. Ancient Mesopotamia. Chicago, 1964, p. 130.

[29] КУКН, 108–109, 111, 192, 265; CTU I, A 5–65A-C, A 8–30, A 9–20, A 12–10.

[30] G. W i l h e l m, R. A k d o ğ a n. Eiene Inschrift Argištis I. mit Erwähnung eines *ašiḫusi*-Gebäudes.– "Studi Micenei ed Egeo-Anatolici", vol. 53, 2011, S. 219–227.

[31] CTU IV, CB Ay–51.

[32] *Ուրարտական պալատական տիպի կառույցների համար ամփոփ տե՛ս նաև* T. B. F o r b e s. *Նշվ. աշխ., էջ 41–46, նկ. 5–6, 11–13, 18.*

նստավայր մայրաքաղաք Տուշպայում (այսպես կոչված՝ "Հին" և "Նոր" պալատները)[33]: Պալատական տիպի համալիրներ են վկայված Արգիշթիխինիլիում՝ շուրջ 660 մ² մակերես ունեցող սյունազարդ դահլիճով (աղ. I, նկ. 2)[34], և Սարդուրիխինիլիում, ուր բացված պալատական հատվածի միջուկը հանդիսավոր մույթերով ուղղանկյունաձև սրահն էր՝ ավելի քան 1215 մ² մակերեսով[35]: Նման կառույցներ են բացվել նաև Էրեբունիում[36], Այանցում[37], Կարմիր-բլուրում[38], Բաստամում[39], Վերին Անձավում[40], Քեֆ-քա

---

[33] M. T. T a r h a n. Recent Research at the Urartian Capital Tushpa.– "Tel Aviv", vol. 21/1, 1994, pp. 33ff., Figs. 3, 12; *Նույնի* ՝ Tushpa-Van Fortress: Researches and Excavations at the Mysterious Iron Age Capital/Tuşpa-Van Kalesi Demirçağ'ın Gizemli Başkentinde Yapılan Araştırmalar ve Kazılar.– İstanbul University's Contribution to Archaeology in Turkey/Türkiye Arkeolojisi ve İstanbul Üniversitesi (1932–2000). İstanbul, 2000, p. 161; M. T. T a r h a n, V. S e v i n. Van Kalesi ve Eski Van Şehri Kazıları – 1988.– "Kazı Sonuçları Toplantısı", Cilt 11/1, 1989 [1990], s. 356–357, Res. 1–4.

[34] *Մանրամասն տե՛ս* А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили.– Археологические памятники Армении 8. Урартские памятники I. Ереван, 1974, с. 79 сл., рис. 29–30; *Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984, էջ 68–77, գծ. 21:*

[35] A. E r z e n. Van Bölgesi Çavuştepe Kazısı.– "Belleten", Cilt 31(123), 1967, s. 469; *Նույնի* ՝Çavuştepe I. M.Ö. 7.-6. Yüzyıl Urartu Mimarlık Anıtları ve Ortaçağ Nekropolü. Ankara, 1978, s. 8 vd.

[36] К. Л. О г а н е с я н. Арин-Берд I. Архитектура Эребуни по материалам раскопок 1950–1959 гг. Ереван, 1961, с. 27; *Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 77:*

[37] *Տե՛ս, օրինակ* ՝ A. Ç i l i n g i r o ğ l u. Temple Area.– Ayanis I. Ten Year's Excavations at Rusaḫinili Eiduru-kai 1989–1998. Roma, pp. 37ff., Figs. 1-2, 26; Ö. H a r m a n ş a h. Stones of Ayanis: New Urban Foundations and the Architectonic Culture in Urartu during the 7th C. BC.– Bautechnik im Antiken und Vorantiken Kleinasien, Internationale Konferenz 13.–16. Juni 2007 in Istanbul. İstanbul, 2009, p. 191f., Fig. 3 *և այլն:*

[38] T. B. F o r b e s. *Նշվ. աշխ., էջ 52, նկ. 27: Հմմտ. նաև* R. D a n. An Hypothesis of Reconstruction of the '*Susi*-Temple' at Karmir-Blur.– Urartu and Its Neighbors. Festschrift in Honor of Nicolay Harutyunyan in Occasion of His 90th Birthday (22–24 September, 2009, Yerevan).– "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies", vol. 5/1–2, 2010, pp. 44ff., Fig. 6.

[39] W. K l e i s s. Bastam, an Urartian Citadel Complex of the Seventh Century B.C.– "American Journal of Archaeology", vol. 84/3, 1980, p. 303.

[40] O. B e l l i, A. M. D i n ç o l, B. D i n ç o l. Bronze Votive Rings with Assyrian Inscriptions found in the Upper Anzaf Fortress in Van.– "Colloquium Anatolicum", vol. 8, 2009, pp. 92ff.

Աղյուսակ I





լեում[41], *Ալթըն-թեփեում*[42] *և Հաֆթական-թեփեում*[43]: *Սյունազարդ կառույցի հետքեր են հայտնաբերվել Կալ'եհ Էսմայիլ Աղայում*[44], *ինչը ևս կարող է հուշել այստեղ պալատական տիպի կառույցի գոյության մասին:*

"Սուսի"-տաճարից և սյունազարդ կամ մույթերով ընդարձակ դահլիճից զատ՝ դրանց շուրջը խմբված, սահմանափակ տարածք զբաղեցնող օժանդակ, տնտեսական կամ բնակելի սենյակներից բացի պարսպապատերից ներս ընկած մնացյալ ողջ տարածքը զբաղեցնում էին արհեստանոցները, պահեստները, ընդարձակ մառանները և ամբարները: Մոնումենտալ ճարտարապետությամբ կառույցները, փաստորեն, երկուսն են՝ "սուսի"-տաճարը և սյունազարդ դահլիճով կառույցը կամ "պալատական հատված"-ը: Հետևաբար, կարծում ենք, որ նման համալիրի բնութագրումն իբրև "պալատ-տաճար" հազիվ թե մեծ ընդդիմության տեղիք տա:

Այս համալիրը կամ այլ կերպ ասած՝ "պալատ-տաճար"-ը, ինչպես կարծում ենք, անվանվում էր É.BÁRA *(աքք. parakku՝ "պատվանդան, սրբարան, աստծո գահանիստ սրահ" և այլն)*[45]: *Ինչպես հայտնի է, Բաստամը՝ ուրարտական ամենախոշոր կենտրոններից մեկը, իր հիմնադրման արձանագրության մեջ հանդես է գալիս որպես* É.BÁRA[46]: *Որպես* É.BÁRA *է հանդես գալիս նաև Ռուսախինիլի Կիլբանիկային*[47]: *Սա ցույց է տալիս, որ* É.BÁRA *շումերագրի տակ ուրարտական տեքստերում պետք է տեսնել ոչ թե կոնկրետ ճարտարապետական-պաշտամունքային կառույց, այլ՝ շենքերի ողջ համալիր*[48]: *Եվ եթե նկատի ունենանք, որ* É.BÁRA *շումերագրի՝ առայժմ*

---

[41] E. B i l g i ç, B. Ö ğ ü n. Adilcevaz Kef Kalesi Kazıları/Excavations at Kef Kalesi of Adilcevaz.– "Anadolu", vol. 8, 1964 [1966], s. 111f.; T. B. F o r b e s. *Նշվ. աշխ., էջ 52, աղ. 3, նկ. 30.*

[42] M. K a r a o s m a n o ğ l u, H. K o r u c u. The Apadana of Altıntepe in the Light of the Second Season Excavations.– Anatolian Iron Ages 7. The Proceedings of the Seventh Anatolian Iron Ages Colloquium held at Edirne, 19–24 April 2010. Louvain, Paris and Walpole, Mass. 2012, pp. 131ff.

[43] C h. A. B u r n e y. Excavations at Haftavān Tepe 1969: Second Preliminary Report.– "Iran", vol. 10, 1972, p. 139.

[44] W. K l e i s s. Urartäische Plätze in Iran (Stand der Forschung Herbst 1975).– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", vol. 9, 1976, S. 29sq., Abb. 12.

[45] Chicago Assyrian Dictionary, vol. 12, P, 2005, p. 145–153 (*parakku* A).

[46] КУКН, 419_{1-2}; CTU I, A $12–7_{1-2}$.

[47] КУКН, 412 лиц. стор. $_6$; CTU IV, CT Tk–1_6.

[48] *Տե՛ս նաև* A. E r z e n. Çavuştepe Yukarı Kale ve Toprakkale 1976 Dönemi Çalışmaları.– "Anadolu Araştırmaları", Cilt 4-5, 1976–1977 [1977], s. 13–14.; P. E. Z i m a n s k y. Ecology and Empire: The Structure of the Urartian State. Chicago, 1985, p. 75; M. S a l v i n i. The Inscriptions of Ayanis (Rusaḫinili Eiduru=kai): Cuneiform and Hieroglyphic.– Ayanis I. Ten

հայտնի ութ հիշատակումից երեքը հստակ վերաբերում են Խալդիի "սրբարան"-ին (^{d}ḫaldiei É.BÁRA)[49], *ապա կարելի է եզրակացնել, որ ուրարտական այս կամ այն քաղաքը, լինի դա Սարդուրիխինիլին, Ռուսախինիլի Էիդուրուկային, Ռուսախինիլի Կիլբանիկային կամ "Զիուկունի երկրի Խալդիի քաղաք"-ը, ըստ ամենայնի, կարող էր համարվել Խալդի աստծո "սրբարան":*

Որպես կանոն՝ É.BÁRA*-ն շրջապատվում էր հզոր պարիսպներով և վերածվում "ամրոց"-ի՝* É.GAL*-ի*[50]*: Իրեն սպասարկող "արտաքին քաղաք"-ի կամ կից բնակավայրի հետ միասին այս համալիրը կազմում էր ուրարտական "քաղաք"-ը: Այլ կերպ ասած՝ ուրարտական քաղաքը դա* É.BÁRA*-ի ("պալատ-տաճար"),* É.GAL*-ի ("ամրոց") և* URU*-ի ("քաղաք") ամբողջությունն էր: Հենց այսպես է ներկայանում Ք. ա. VII դ-ի ուրարտական խոշոր կենտրոններից մեկը՝ Այանցը: Այդ քաղաքի հիմնադրման արձանագրություններում միաժամանակ նշվում է թե՛ "պալատ-տաճար", թե՛ "ամրոց" և թե՛ "քաղաք" կառուցելու մասին.*

… *ieše ini* É.BARA *šidištubi eχa* É.GAL *badusie šidištubi* … URU *šuḫi ištini šatubi* … *terubi tini* ^{m}*rusaḫinili* ^{KUR}*eidurukai* "…ես այս տաճարը կառուցեցի, նաև ամրոց փառահեղ կառուցեցի, … քաղաք նոր այստեղ զցեցի, … դրեցի անունը Ռուսախինիլի Էիդուրուկայի"[51]*:*

Այս պատկերը բնութագրական է տերության բոլոր խոշոր կենտրոնների համար: Կարելի է անգամ պնդել, որ Բիայնիլի-Ուրարտուում քաղաքաշինությունն ըստ էության նույնանում էր (ամրացված) պալատական/տաճարային համալիրի կառուցման հետ, և "քաղաքաշինություն" եզրույթը կիրառելի է թերևս միայն այն պատճառով, որ այդ համալիրին կից կամ մերձավորությամբ է գտնվել այդ կառույցը սպասարկելու կոչված բնակելի հատվածը՝ այսպես կոչված, "արտաքին քաղաք"-ը կամ կից բնակատեղին[52]*: Քաղա-*

Year's Excavations at Rusaḫinili Eiduru-kai 1989–1998, Roma, 2001, p. 259, n. 7; *Նույնի՝* Die urartäische Tontafel VAT 7770 aus Toprakkale.– "Altorientalische Foschungen" Bd. 34/1, 2007, S. 41sqq. *Հմմտ. Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 65–66,* I. M. D i a k o n o f f. Sacrifices in the City of Teišebâ (UKN 448) – Lights on the Social History of Urartu.– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", Bd. 24, 1991, p. 13, n. 3, 30.

[49] КУКН, 247$_{3}$, 424$_{12}$; CTU I, A 12–1 II$_{6-7}$, A 12–2 II$_{1}$, A 12–3$_{5}$.

[50] *Հմմտ., օրինակ՝ Այանցի հիմնադրման արձանագրությունը՝ ieše e'a* É.BÁRA *e'a* É.GAL *badusi šidištubi* (CTU I, A 12–9$_{5-6}$).

[51] CTU I, A 12–1 VI$_{4-9}$.

[52] *Այս հարցի շուրջը տե՛ս և հմմտ.* К. Л. О г а н е с я н. Вопросы градостроительства Урарту.– ИФЖ, 1983, № 4, с. 138 сл.; *Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Ուրարտական ճարտարապետություն, խմբ.՝ Գ. Տիրացյան.– Հայկական ճարտարապետության*

քաշինական այս մոտեցումն ունի հին արմատներ և հանգում է Ք. ա. II հազ. երկրորդ կեսի սիրիական – հյուսիսմիջագետքյան քաղաքներին: Վերջիններս կազմված էին միջնաբերդից (աքք. ki/erḫu*), ուր գտնվում էր տաճարը, իսկ միջնաբերդի ստորոտին սփռված էր "ստորին քաղաք"-ը (աքք. adaššu)*[53]*:*

Սա մղում է մտածելու, որ ուրարտական քաղաքաշինությունը Հայկական լեռնաշխարհում մինչուրարտական շրջանում ընթացող քաղաքագոյացման գործընթացների շարունակությունը չէր[54]*: Ընդհակառակը, այդ գործընթացներն ընդհատվել են ուրարտական ներխուժումներով, իսկ դրանց հաջորդած ուրարտական տիրապետության հաստատումը նշանավորվել է վաղերկաթեդարյան "քաղաքներ"-ի վախճանով Հայկական լեռնաշխարհի մի զգալի մասում: Ուրարտական ամրոցի կառուցման ժամանակ, եթե այն կառուցվում էր նախորդող՝ վաղերկաթեդարյան բնակավայրի տեղում, այդ բնակավայրը սովորաբար ավերվում էր*[55]*: Ուրարտական պալատական/տաճարային տիպի պետության բնույթը բացառում էր երկրում քաղաքների կամ քաղաքային տիպի այնպիսի բնակավայրերի գոյությունը, որոնցում կարող էր կենտրոնանալ մեծաթիվ բնակչություն, թույլ կտար խոսել քաղաքային ամրությունների առկայության և սահմանափակ տարածքով պայմանավորված՝ բնակելի կացարանների խիտ կառուցապատման մասին (Լճաշեն*[56]*, Հնաբերդ*[57]*, Սանգար*[58]*, և այլն), տաճարների / սրբարանների գո-*

պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 92–124; Г. А. Т и р а ц я н, Г. А. К о ш е л е н к о. Южное Закавказье.– В кн.: Археология ССР, т. 7. Древнейшие государства Кавказа и Средней Азии. М., 1985, с. 24 сл.; T. A. S i n c l a i r. Eastern Turkey: An Archaeological and Architectural Survey, vol. I. London, 1987, pp. 13f.

[53] L. A. O p p e n h e i m. *Նշվ. աշխ., էջ 131–132: Տե՛ս նաև Ա. Ա. Բ ո ր ո խ յ ա ն. Կիրխու. ամրոց-բնակավայրի մի տեսակ Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններում և Հայկական լեռնաշխարհում.– ՊԲՀ, 2016, № 2, էջ 166–179:*

[54] *Հմմտ. Ա. Ա. Բ ո ր ո խ յ ա ն. Քաղաքագոյացման գործընթացները նախաուրարտական Հայաստանում (պարբերացման փորձ).– Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը, Երևան, 2014, էջ 72–73, ն ո ւ յ ն ի՝ Կիրխու ամրոց-բնակավայրի մի տեսակ Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններում և Հայկական լեռնաշխարհում, էջ 168, 174:*

[55] *Ամփոփ տե՛ս* A. T. S m i t h. The Political Landscape. Constellations of Authority in Early Complex Polities. Berkeley, Los Angeles and London, 2003, pp. 166ff.

[56] *Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, 1969, էջ 14:*

[57] A. T. S m i t h, R. S. B a d a l y a n, P. A v e t i s y a n. The Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies, vol. 1: The Foundations of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia. Chicago, 2009, p. 302, Pl. 47.

յություն, ինչպիսիք վկայված են Հայաստանի ուշ-բրոնզ – վաղերկաթեղարյան բնակատեղիներում (Մեծամոր[59], Դվին[60], Գեղարոտ[61], Շամիրամ[62], Շիրակավան[63]) ու բնակիչների՝ քաղաքային / համայնական ինքնավարության և շուկայական հարաբերություններով պայմանավորված քաղաքային կյանքին բնորոշ կենցաղավարության մասին, օրինակ՝ հրապարակի/ շուկայի առկայություն (Ղազարավան[64], Լճաշեն[65]):

Ուրարտական քաղաքային տիպի որևէ կենտրոնի բնականոն զարգացում ու տարածքի ընդլայնում, որը կարող էր տեղի ունենալ թեկուզև բնակչության բնական աճով պայմանավորված, չի նկատվում, իսկ նոր կառուցապատումները վերաբերում են միայն պետության աճող կարիքները սպասարկելու համար նոր հնարավորությունների ստեղծմանը (գերազանցապես՝ մառաններ և ամբարներ): Ինչ վերաբերում է տերության գոյության վերջին շրջանում՝ Ք. ա. VII դ. երկրորդ կեսում այդ կենտրոններում տեղ գտած բնակչության կտրուկ աճին, պարզունակ կացարաններով "թաղամասեր"-ի հապշտապ կառուցապատումներին ու անպաշտպան "քաղաքային" թաղամասերը պարսպապատելու ջանքերին, ապա դրանք բնականոն կյան-

---

[58] *Գ. Հ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Մարտունու շրջանի կիկլոպյան ամրոցները.– ՊԲՀ, 1966, № 3, էջ 237–240, նկ. 3:*

[59] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն, Կ. Հ. Մ կ ր տ չ յ ա ն, Է. Ս. Պ ա ր ս ա մ յ ա ն. Մեծամոր, Երևան, 1973, էջ 107–123, նկ. 110–113:*

[60] К. Х. К у ш н а р е в а. Древнейшие памятники Двина. Ереван, 1977, с. 11 сл., табл. IV, VII, XII–XIII, XXVIII, рис. 11, 18–19, 25, 58.

[61] R. S. B a d a l y a n, A. S m i t h, I. L i n d s a y, L. K h a t c h a d o u r i a n, P. A v e t i s y a n. Village, Fortress, and Town in Bronze and Iron Age Southern Caucasia: A Preliminary Report on the 2003–2006 Investigations of Project ArAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia.– "Archäologische Mitteilungen aus Iran und Turan", Bd. 40, 2008, pp. 65ff., Fig. 20.

[62] *Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն. ԵՊՀ-ի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները.– "Բանբեր Երևանի համալսարանի", 1976, № 1, էջ 286–287, նկ. 2:*

[63] R. S. B a d a l y a n, P. S. A v e t i s y a n. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I. Mt. Aragats and its Surrounding Region. Oxford, 2007, p. 238.

[64] *Գ. Ա ր ե շ յ ա ն, Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան-համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում.– Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 71:*

[65] *Գ. Հ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները.– Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 1, Երևան, 1968, նկ. 4:*

քի արդյունքներ չէին և պայմանավորված էին այդ շրջանում տերության մեջ դիտվող ճգնաժամային երևույթներով[66]:

Բիայնիլի-Ուրարտուում բնակարանաշինությունն իրականացվում էր պետության ունեցած պահանջներից և կարիքներից ելնելով: Տերության քաղաքային տիպի խոշոր կենտրոններում բացված բնակելի շենքերի մի մասը, ակնհայտորեն, կառուցվել էր պետության կողմից: Դրանք ընդարձակ՝ 250-ից մինչև 780 մ² մակերեսով և մինչև 10–15 սենյակից կազմված կանոնավոր, բազմաֆունկցիոնալ, իսկ երբեմն՝ բազմաբնակարան կառույցներ էին ու նոսր, ազատ կառուցապատված թաղամասերի ընդարձակ առանձնատներ[67]: Նման տներում, անկասկած, բնակվել են ուրարտական վերնախավի ներկայացուցիչներ[68]: Այս առումով տեղին է հիշել պեղող հնագետների կողմից այդ տներին տրված անվանումները՝ "նշանավոր ուրարտացու" տուն (Կարմիր-բլուր)[69], "կնիք կրող"-ի տուն, "մարիյե"-ի տուն [maryannu՝ "կառամարտիկ", (իմա՝ "ազնվական") բառի ուրարտ. արտասանությունը], "քուրմ-բուժակ"-ի տուն (Արգիշթիխինիլի)[70] և այլն (աղ. II, նկ. 1–2): Այն, որ նրանք եղել են վերնախավի անդամներ, կարելի է դատել նաև այն փաստից, որ այդ տներից են հայտնաբերվել ծանրազեն զինվորականի կամ կառամարտիկի

---

[66] Y. H. G r e k y a n. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire).– "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies", vol. 4/2, 2009, pp. 102ff.; *Ե. Հ. Գ ր ե կ յ ա ն. Վանի թագավորության անկման խնդրի շուրջը.– Հայկազուններ. առասպել և պատմություն, Երևան, 2013, էջ 64–82:*

[67] Г. А. Т и р а ц я н, Г. А. К о ш е л е н к о. *Նշվ. աշխ., էջ 26, Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 128, աղ. 28–29;* J. K. H o f f m a n. Sociopolitical Implications of the Architecture of Northern Urartu and Urartian Written Sources. BSci Thesis, Massachusetts Institute of Technology. Cambridge, Mass., 1978, p. 80ff.; *Հ. Գ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Ա. Ա. Բ ո բ ո խ յ ա ն. Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ), Երևան, 2010, էջ 120–124*; E. S t o n e. Social Differentiation within Urartian Settlements.– Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007. Louvain, 2012, pp. 91ff.

[68] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 264 сл. *Հմմտ.* Г. А. Т и р а ц я н, Г. А. К о ш е л е н к о. *Նշվ. աշխ., էջ 26:*

[69] А. А. М а р т и р о с я н. К характеристике города Тейшебаини.– «Известия» Академии наук Армянской ССР, 1957, № 8, с. 88, рис. 2; *Ն ո ւ յ ն ի՝* Раскопки жилых кварталов города Тейшебаини в 1955–1956 гг.– «Советская Археология», 1958, № 1, с. 165.

[70] А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили, с. 109, 112, 121, 133.

թեփուկավոր զրահի մասեր[71]: Մասնավոր տներից զինվորական հանդերձանքի հայտնաբերումը ինքնին հետաքրքիր է: Նման օրինակ ունենք Նուզիից: Տեղի "մարյանուներ"-ից մի քանիսի՝ Թեխիպ-թիլլայի, Շուրկի-թիլլայի, Ջիկիի և արքայազն Շիլվի-Թեշշուբի տներից ևս գտնվել են զրահներ[72]: Ընդհանրապես, Նուզիի ռազմիկների՝ հաճախ երկհարկանի տները, առաջին հարկի՝ 100–300 մ² մակերեսով[73], միանգամայն համադրելի են "ուրարտական վերնախավի տներ"-ի հետ:

Կարմիր-բլուրում բացված նման տներից մեկը զբաղեցնում էր շուրջ 500 մ² մակերես: Առանձնատունն ունեցել է ուղղանկյունաձև հինգ սենյակ, մեկ մեծ, սյունազարդ դահլիճ և բակ՝ 3 մ լայնությամբ մուտքով, որը, հավանաբար, նախատեսված էր մարտակառքի համար[74]: Բնակելի տների կորիզը կազմում էր ընդհանուր սենյակը՝ ծածկված մի քանի սյուների օգնությամբ, իսկ ընդհանուր սենյակի կամ դահլիճի շուրջը դասավորված էին մնացյալ բնակելի և օժանդակ սենյակները[75]: Տիպաբանորեն նման տները Ք. ա. II - հազ. միտաննական ու միջինասորեստանյան բնակարանային ճարտարապետության շարունակությունն են և հիշեցնում են Նուզիից ու Աշշուրից հայտնի և մասնագիտական գրականության մեջ՝ որպես Mittelsaalhaus դասակարգված տները (աղ. II, նկ. 4)[76]: Ուրարտական վերնախավի տների մի մասը կարելի է դասակարգել իբրև տիպիկ regulierte Agglutinat, այն է՝ գրեթե հավասար մակերես ունեցող սենյակների բաժանված տուն (աղ. II, նկ. 3):

Բիայնիլի-Ուրարտուում "վերնախավ"-ի տները ցուցաբերում են ուրարտական ճարտարապետությանը բնորոշ մոնումենտալություն. ունեն ուղիղ,

---

[71] *Նույն տեղում, էջ 112, նկ. 89բ (10)*; С. А. Е с а я н. Доспех Древней Армении. Ереван, 1986, с. 48; M. T. T a r h a n, V. S e v i n. Van Kalesi ve Eski Van Şehri Kazıları – 1989.– "Kazı Sonuçları Toplantısı", Cilt 12/2, 1990 [1991] s. 434, Res. 22/4.

[72] T. D. H u l i t. Late Bronze Age Scale Armour in the Near East: An Experimental Investigation of Materials, Construction, and Effectiveness, with a Contribution of Socio-Economic Implications. Durham E-Theses. Durham, 2002, pp. 76ff.

[73] N. B. J a n k o w s k a. Life of the Military Élite in Arraphe.– Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians (in Honor of E. R. Lacheman on His 75th Birthday). Winona Lake, Indiana, 1981, pp. 195ff.

[74] К. Л. О г а н е с я н. Кармир-Блур IV. Архитектура Тейшебаини. Ереван, 1955, с. 16 сл.

[75] *Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 121:*

[76] M. N o v á k. Eine Typologie der Wohnhäuser von Nuzi.– "Baghdader Mitteilungen", Bd. 25, 1994, S. 399, Abb. 6, 8sqq.; *Ն ո ւ յ ն ի* 'The Architecture of Nuzi and Its Significance in the Architectural History of Mesopotamia.– Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians, vol. 10, 1999, pp. 131ff., Fig. 7.

որմնահեցերով զարդարված պատեր, որոնք ունեցել են գեղագիտական արժեք[77]: Ուրարտական "պետ-ստանդարտ"-ի ճարտարապետության լավագույն օրինակը Կարմիր-բլուրի քաղաքային հատվածի հարավարևմտյան մասում պեղված միանման հատակագծով չորս բնակարանից կազմված բազմասեկցիոն շենքն է[78]: Ուրարտական "պետ-ստանդարտ"-ի կամ "վերնախավ"-ի տներն իրենց տարածքով և կառուցապատման հանդիսավորությամբ միանգամայն համադրելի են միտաննական (Նուզի[79]) և ասորեստանյան նահանգային կենտրոններում պետության կողմից կառուցված վերնախավի տներին, ինչպես օրինակ՝ Դուր-Կատլիմուի "Ստորին քաղաք" II-ում է[80]:

Հետաքրքիր է, որ նման տներով կառուցապատված "թաղամասեր"-ն առավել մոտ են ընկած եղել ամրոցին[81]: Դրա՝ "վերնախավի թաղամաս"-ի անմիջական մերձավորության փաստը հետաքրքիր զուգահեռներ ունի հին Առաջավոր Ասիայում: Մասնավորապես, Բաբելոնիայում կասսիտական տիրապետության շրջանում կասսիտական վերնախավը՝ հիմնականում կա-

---

[77] W. K l e i s s. Bastam and the East of Urartu.– Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena (Bergamo, 28-30 Giugno 1975). San Lazzaro, Venice, 1978, p. 399; *Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 95:*

[78] А. А. М а р т и р о с я н. Новые данные по истории города Тейшебаини.– ИФЖ, 1963, № 3, с. 221 сл., рис.; *Ն ո ւ յ ն ի* 'Армения в эпоху бронзы и раннего железа, с. 260 сл., рис. 98–99; *Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 135–136, աղ. 31:*

[79] M. N o v á k, The Architecture of Nuzi and Its Significance…, pp. 130–131, Fig. 5*:*

[80] H. K ü h n e. Šaiḫ Hamad, Tall. B. Archäologisch.– "Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie", Bd. 11, 2006–2008, S. 548, Abb. 3; *Ն ո ւ յ ն ի* 'Urbanism in the Assyrian Homeland. – Correlates of Complexity. Essays in Archaeology and Assyriology Dedicated to Diederik J.W. Meijer in Honour of His 65th Birthday. Leiden, 2011, p. 146, Fig. 11.5.

[81] M. T. T a r h a n. Tushpa-Van Fortress…/Tuşpa-Van Kalesi…, p. 163, Fig. 10; *Ն ո ւ յ ն ի* ' Başkent Tuşpa/The Capital City Tushpa.– Urartu: Doğu'da Değişim/Urartu: Transformation in the East. İstanbul, 2011, pp. 326ff. *(Տուշպա);* А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили, с. 104 сл., 133, рис. 9; *Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., գծ. 8 (Արգիշթիխինիլի-Արմավիր),* E. C. S t o n e, P. Z i m a n s k y. The Urartian Transformation in the Outer Town of Ayanis.– Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond. Los Angeles, 2003, pp. 214ff., 220, Figs. 11.4–11.5; E. S t o n e. A Tale of Two Cities: Lowland Mesopotamia and Highland Anatolia.– The Ancient City: New Perspectives on Urbanism in the Old and New World. Santa Fe, NM, 2008, p. 153, Fig. 8.9. *(Այանց);* А. А. М а р т и р о с я н. Город Тейшебаини по раскопкам 1947–1958 гг. Ереван, 1961, с. 106 сл., рис. 42; *Ն ո ւ յ ն ի* 'Армения в эпоху бронзы и раннего железа, с. 259 сл., рис. 94 *(Կարմիր-բլուր) և այլն:*

ռամարտիկներ, կենտրոնացվել են պալատի / ամրոցի շուրջը[82]*: Այս նույնը տեսնում ենք նաև Նուզիում, ուր ևս "ազնվականություն"-ը հիմնականում բնակվում էր կամ պալատում, կամ՝ պալատի մերձավորությամբ*[83]*: Ուգարիթյան մի քանի տեքստեր հայտնում են պալատում բնակվող տասնյակ կառամարտիկների մասին (mryn): Ընդ որում, Ուգարիթում ևս բացվել են նմանատիպ "վերնախավ"-ի տներ: Հայտնի է, որ դրանցից մեկի տերը՝ Ուրտենուն, կառամարտիկ էր՝ "մարյանու"*[84]*:*

Ի տարբերություն պետության կամ պետական ճարտարապետների կողմից կառուցված ուրարտական վերնախավի ընդարձակ տների՝ բնակչության մյուս հատվածը բնակվում էր 16-ից մինչև 100 մ² մակերես զբաղեցնող փոքր, կառուցվածքով իրար նման տներում: Դրանք հիմնականում երկսենյակ էին, ունեին նախասրահ կամ բաց/ կիսածածկ բակ: Պատերը կառուցված էին քարից՝ կավի լիցքով. հում աղյուսի կիրառության հետքերն չեն նկատվում[85]*: Նման տներով թաղամասերը ուրարտական "վերնախավ"-ի թաղամասի համեմատությամբ առավել խիտ են կառուցապատված, սակայն, ընդհանուր առմամբ, ուրարտական քաղաքային կենտրոնների կառուցապատման խտությունն էապես զիջում է սիրիամիջագետքյան նորմերին (տե՛ս ստորև):*

Խիստ սակավ դեպքերում է, որ Ուրարտուում քաղաքային տիպի կենտրոնների կառուցապատումը ցուցաբերում է շատ թե քիչ կանոնավոր բնույթ (Կարմիր-բլուր): Հիմնականում ամրոցների թե՛ "արտաքին քաղաքներ"-ը, և

---

[82] S. F. C. R i c h a r d s o n. Mesopotamia and the "New" Military History.– Recent Directions in the Military History of the Ancient World. Claremont, CA, 2011, p. 23.

[83] R. D r e w s. The End of the Bronze Age: Changes in Warfare and the Catastrophe ca. 1200 BC., Princeton, N.J., 1993, p. 113.

[84] K. M. M c G e o u g h. Exchange Relations at Ugarit. Leuven, Paris and Dudley, Mass., 2007, pp. 104, 246ff., 300.

[85] В. С. С о р о к и н. Раскопки древнего поселения.– В кн.: Б. Б. Пиотровский. Кармир-Блур II. Результаты раскопок 1949–1950 гг. Ереван, 1952, с. 79 сл.; К. Л. О г а н е с я н. Кармир-Блур IV, с. 18 сл., рис. 9а; *Կ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 131–134, աղ. 30,* А. А. М а р т и р о с я н. К характеристике города Тейшебаини, с. 83 сл.; Б. Б. П и о т р о в с к и й. Город бога Тейшебы (Кармир-Блур).– «Советская археология», 1959, № 2, с. 175 сл.; T. B. F o r b e s. *Նշվ. աշխ., էջ 119–120, նկ. 63, 67, Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 121:*

թե՛ կից բնակավայրերն անկանոն են կառուցապատված, քաղաքաշինության որևէ նորմ տեսանելի չէ[86]:

Ցավոք, քիչ տվյալներ են պահպանվել Տուշպայի քաղաքային թաղամասերի կառուցապատման մասին: Ինչպես երևում է՝ Վանա ժայռի ստորոտին փռված "ստորին քաղաք"-ը պարսպապատ էր[87] և բիայնական տիրապետության շրջանում կառուցապատվել էր "պետ-ստանդարտ"-ի տներով[88]: Պարսպապատերից դուրս կարող էր սփռված լինել "արտաքին քաղաք"-ը: Ուրարտական շրջանի շինություններով է կառուցապատված եղել, այսպես կոչված, "Տուշպա-հյոյուք"-ը՝ Վանի միջնաբերդից ճիշտ դեպի հյուսիս: Ներկայում այն մոտ 70 մ լայնությամբ ձգվում է գրեթե 1 կմ: Այդ հատվածում այժմ ընթացող պեղումները կարող են պատկերացում տալ արվարձանի ընդգրկած տարածքի և կառուցապատման խտության մասին[89]:

Բիայնիլի-Ուրարտուում բնակավայրերը տարբեր էին՝ փոքր, ամրություններից զուրկ գյուղական բնակավայրերից մինչև քաղաքային կենտրոններ հիշեցնող ամրացված "պալատ-տաճարներ": Միրիամիջագետքյան չափորոշիչներով խոշոր քաղաք է համարվում 100–400 և ավելի հա, քաղաք՝ 40–50 և ավելի հա, իսկ գյուղաքաղաք՝ 5–25 և ավելի հա զբաղեցնող բնակավայրը[90]: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ միրիամիջագետքյան քաղաքն ընդգրկում էր ողջ պարսպապատ գոտին՝ չհաշված դրանից դուրս սփռված և ամրություններից զուրկ արվարձանները:

---

[86] *Տե՛ս նաև* T. T a r h a n, V. S e v i n. Van Bölgesinde Urartu Araştırmaları (I). Askerî ve Sivil Mimariye Ait Yeni Gözlemler.– "Anadolu Araştırmaları", Cilt 4–5, 1976–1977 [1977], s. 286.

[87] M. T. T a r h a n. Recent Research at the Urartian Capital Tushpa, p. 39; *Նույնի՝* Tushpa-Van Fortress…/Tuşpa-Van Kalesi…, p. 163.

[88] M. T. T a r h a n. Recent Research at the Urartian Capital Tushpa, p. 44, Fig. 15; M. T. T a r h a n, V. S e v i n. Van Kalesi ve Eski Van Şehri Kazıları – 1989, pp. 434–435, Figs 16–17; *Նույնի՝* Van Kalesi ve Eski Van Şehri Kazıları – 1991.– "Kazı Sonuçları Toplantısı", Cilt 14/1, 1992 [1993], s. 410f., Res. 10, 17-19; E. K o n y a r, I. A y m a n, C. A v c ı, D. Y i ğ i t p a ş a, B. G e n ç, R. G. A k g ü n. Excavations at the Mound of Van Fortress/Van Kalesi Höyüğü.– "Colloquium Anatolicum", vol. 11, 2012, s. 223f., Figs. 9–10.

[89] M. T. T a r h a n. Tushpa-Van Fortress…/Tuşpa-Van Kalesi…, pp. 162–163; E. K o n y a r, I. A y m a n, C. A v c ı, D. Y i ğ i t p a ş a, B. G e n ç, R. G. A k g ü n. Excavations at the Mound of Van Fortress/Van Kalesi Höyüğü, pp. 219–221.

[90] *Տե՛ս և հմմտ.* R. M c C. A d a m s, H. J. N i s s e n. The Uruk Countryside: The Natural Setting of Urban Societies. Chicago, London, 1972, p. 18; G. A l g a z e. Ancient Mesopotamia at the Dawn of Civilization: The Evolution of an Urban Landscape. Chicago, London, 2008, pp. 103, 167ff. (Appendix I-II).

Մինչդեռ, ուրարտական “քաղաք”-ները պարսպապատ չէին և բաց բնակավայրեր էին՝ սփռված ամրոցի կամ ամրացված “պալատ-տաճար”-ի շուրջը: Վերջինս զբաղեցնում էր սահմանափակ տարածք՝ սովորաբար 2–6 հա (Վերին Անձավ՝ 6 հա[91], Այանց՝ 6 հա[92], Ներքին Խնձոր/Քայալրդերե՝ 5 հա[93], Արգիշթիխինիլի-Արմավիր՝ մոտ 4 հա (“Արևմտյան” միջնաբերդ՝ 2–2.2 հա և “Արևելյան” միջնաբերդ՝ 2 հա)[94], Հայկաբերդ/Չավուշթեփե՝ շուրջ 4 հա (“Վերին միջնաբերդ”՝ 0.5 հա[95], “Ստորին միջնաբերդ”՝ 3 հա-ից քիչ ավելի)[96], Կարմիր-բլուր՝ մոտ 4 հա[97], Կրզ Կալ’եհ (Էվօղլու)՝ մոտ 4 հա[98], Հոռոմի ուրարտական ամրոց՝ շուրջ 3.6 հա[99], Թոփրաքքալե՝ 2.5 հա[100], Էրեբունի՝ մոտ 2 հա[101], Արտաշատի ուրարտական ամրոց՝ 2.5 հա[102] և այլն), եզակի դեպքե-

---

[91] O. B e l l i. The Anzaf Fortress and the Gods of Urartu. İstanbul, 1999, p. 16.

[92] A. Ç i l i n g i r o ğ l u. Ayanis: An Iron Age Site in the East.– The Oxford Handbook of Ancient Anatolia. Oxford, New York, 2011, p. 1055.

[93] C h. A. B u r n e y. A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalıdere.– “Anatolian Studies”, vol. 16, 1966, p. 63.

[94] К. К а ф а д а р я н. Новые данные по архитектуре Урарту.– «Советская археология», 1967, № 4, с. 237; А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили, с. 44. *Հմմտ. նաև* A. T. S m i t h. Imperial Archipelago: The Making of the Urartian Landscape in Southern Transcaucasia. PhD thesis, The University of Arizona. Ann Arbor, 1996, p. 232, Tab. 5.4.

[95] V. S e v i n. Çavuştepe Aşağı ve Yukarı Kale Kapıları. Urartu Mimarlığında Sıra Dışı Uygulamalar.– Armizzi – Engin Özgen’e Armağan/Studies in Honor of Engin Özgen. Ankara, 2014, s. 228, Şek. 6.

[96] A. E r z e n. Çavuştepe I, p. 8.

[97] А. А. М а р т и р о с я н. Город Тейшебаини, с. 91; *Նույնի*՝ Армения в эпоху бронзы и раннего железа, с. 252. *Ըստ Ադամ Սմիթի՝ Կարմիր-բլուրի միջնաբերդի մակերեսը կազմում է մոտ 3.1 հա (տե՛ս* A. T. S m i t h. Imperial Archipelago, p. 294, Tab. 6.5*):*

[98] W. K l e i s s. Planaufnahmen urartäischer Burgen in Iranisch-Azerbaidjan im Jahre 1972.– “Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge”, Bd. 6, 1973, S. 87. *Հմմտ.* P. E. Z i m a n s k y. Ecology and Empire, p. 35, Tab. 2.

[99] R. B a d a l j a n, C. E d e n s, R. G o r n y, P h. K o h l, D. S t r o n a c h, A. T o n i k j a n, S. H m a y a k j a n., S. M a n d r i k j a n, M. Z a r d a r y a n. Preliminary Report on the 1992 Excavations at Horom, Armenia.– “Iran”, vol. 31, 1993, p. 2.

[100] A. E r z e n. Çavuştepe Yukarı Kale ve Toprakkale 1976 Dönemi Çalışmaları, p. 18; W. K l e i s s. Die Architektur.– Bastam II. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1977-1978: 13–74. Berlin, 1988, S. 31.

[101] К. Л. О г а н е с я н. Арин-Берд I. Архитектура Эребуни. Ереван, 1961, с. 16. *Հետագայում նա միջնաբերդի տարածքը գնահատում է մոտ 8 հա* (*նույնի*՝ Крепость Эребуни (782 г. до н.э.), 1980, Ереван, с. 43).

ռում է կազմում շուրջ 10 ու ավելի հա (Տուշպա՝ շուրջ 8–9 հա[103], Լիվար՝ 9 հա[104], Կալաթգահ՝ շուրջ 10 հա[105]), և ընդամենը երեք ամրոց են, որ գերազանցում են 10 հա-ը (Բաստամ՝ մոտ 30 հա[106], Վերախրամ՝ 24 հա[107], Կալ'եհ Էսմայիլ Աղա՝ մոտ 16 հա[108]): Իրենց "արտաքին քաղաք"-ի հետ անգամ քաղաքային կենտրոնների մակերեսը սովորաբար չէր գերազանցում 40–50 հա-ը: Մասնավորապես, շուրջ 40 հա է կազմել Կարմիր-բլուրի տարածքը[109]: Արին-բերդի քաղաքային թաղամասերը[110], հավանաբար, ընդգրկել են մոտ 50

---

[102] A. T o n i k i a n. The Layout of Artashat and Its Historical Developments.– "Mesopotamia", vol. 27, 1992, p. 172. *Հմմտ. նաև* A. T. S m i t h. Imperial Archipelago, pp. 258ff.

[103] B. A n d r é - S a l v i n i, M. S a l v i n i. Architecture et programme dynastique. Les monuments de la capitale de l'Urartu, sur le rocher de Van.– "Subartu", vol. 17, p. 261; M. T. T a r h a n. Başkent Tuşpa/The Capital City Tushpa, p. 289; E. K o n y a r. Van-Tuşpa Aşağı Yerleşmesi Van Kalesi Höyüğü Kazıları.– "Kazı Sonuçları Toplantısı", Cilt 33/3, 2012, s. 409 vd.

[104] W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze in Iran: A. Architektur (Stand der Forschung Herbst 1976) – B. Die Oberflächenfunde des Urartu-Surveys 1976.– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", Bd. 10, 1977, S. 55sqq.

[105] *Հմմտ. նաև* P. E. Z i m a n s k y. *Նշվ. աշխ., էջ 39:*

[106] W. K l e i s s. Bastam, an Urartian Citadel Complex…, p. 301; *S.* K r o l l. Rusa-i URU.TUR (Bastam).– "Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie", Bd. 11, 2006–2008, S. 469. *Հմմտ.* P. E. Z i m a n s k y. *Նշվ. աշխ., էջ 35, աղ. 2:*

[107] W. K l e i s s. Planaufnahmen urartäischer Burgen und Neufunde urartäischer Anlagen in Iranisch-Azerbaidjan im Jahre 1973.– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", Bd. 7, 1974, S. 84. *Հմմտ.* P. E. Z i m a n s k y. *Նշվ. աշխ., էջ 35, աղ. 2:*

[108] W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze in Iran: A. Architektur (Stand der Forschung Herbst 1976)…, S. 66. *Հմմտ.* P. E. Z i m a n s k y. *Նշվ. աշխ., էջ 35, աղ. 2:*

[109] Б. Б. П и о т р о в с к и й. Кармир-Блур I: Результаты раскопок 1939–1949 гг. Ереван, 1950, с. 13, 17; *Ն ո ւ յ ն ի* Город бога Тейшебы (Кармир-Блур), с. 170; В. С. С о р о к и н. Раскопки древнего поселения, с. 79; А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 259. *Տե՛ս նաև Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 103: Հմմտ., սակայն,* А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили, с. 44 *(700–800 հա, որից 50 հա-ը՝ "պարսպապատ ներքին քաղաք"-ը),* Г. А. Т и р а ц я н, Г. А. К о ш е л е н к о. Южное Закавказье, с. 24 *(600–800 հա); Ս. Ա. Ե ս ա յ ա ն. Կարմիր-բլուր, Երևան, 1982, էջ 13 (100 հա):*

[110] *Էրեբունիի "քաղաքային թաղամաս"-ը ուսումնասիրված է մակերեսորեն և առայժմ միայն այստեղ հաստատագրվել են ընդարձակ կառույցների, թերևս, առանձնատների ու մի քանի սենյակից բաղկացած անկանոն կառուցված կացարանների հետքեր* (S. H o d j a s c h. Das Leben in der urartäischen Stadt Erebuni.– Vorträge gehalten auf der 28. Rencontre Assyriologique Internationale in Wien 6.-10. Juli 1981. Horn, 1982, S. 271)*: Կացարանների հետքեր այստեղ փաստագրվել են նաև 1998 թ.*

հա տարածք[111]: 40–50 հա տարածք է ենթադրվում Հոռոմի քաղաքային բնակատեղիի համար[112], մոտ 40 հա է զբաղեցրել Ներքին Խնձորի / Քայալըդերեի ուրարտական բերդաքաղաքը[113], իսկ Արագածի ուրարտական ամրոցի շուրջը սփռված ընդարձակ բնակատեղին՝ մոտ 30–40 հա տարածք[114]: Շատ ավելի համեստ տարածք է զբաղեցրել ուրարտական վաղ կենտրոններից մեկի՝ Վերին Անձավի ամրոցի "արտաքին քաղաք"-ը, որը տարածվում էր մոտ 14 հա-ի վրա[115]: Նորգեղի բնակատեղին, որը պաշտպանված էր փոքր ամրոցով, սփռված էր մոտ 20 հա տարածքի վրա[116]: 24 հա մակերես է զբաղեցրել Գյոյ-թեփեի՝ ուրարտական շրջանով թվագրվող բնակատեղին[117], իսկ

---

*իրականացված կարճատև պեղումների ժամանակ (*Ф. Т е р - М а р т и р о с о в. Раскопки крепости Эребуни.– «Ушардзан» (Памятник), т. 4–5. Ереван, 2008, с. 152–159*). Էրեբունիի 2007 թ. պեղումների ընթացքում միջնաբերդից հարավ-արևելք ընկած բլրի վրա բացված ուղղանկյունաձև ընդարձակ կառույցի համար տե՛ս* D. S t r o n a c h, F. T e r - M a r t i r o s o v, A. A y v a z i a n, W. C o l l i n s, C. D e m o s, S. G h a n i m a t i. Erebuni 2007.– "Iranica Antiqua", Bd. 44, 2009, pp. 182ff., 1–3, Pls. 1–4*: Վերջին ուսումնասիրություններից տե՛ս նաև* M. H e r l e s, J. W. E. F a s s b i n d e r. Magnetic Prospecting on Basaltic Geology: the Lower City of Erebuni (Armenia).– "Archaeologia Polona", Bd. 53, 2015, pp. 292ff.

[111] К. Л. О г а н е с я н. Арин-Берд I, с. 15. *Սակայն հետագա հրատարակություններում Կ. Հովհաննիսյանը նշում է 200 հա թիվը: Դա հավաստի փաստարկել ոչ մի կերպ հնարավոր չէ և, ինչպես մեզ է թվում, խիստ չափազանցված է: Հմմտ.* К. Л. О г а н е с я н. Крепость Эребуни, с. 33; R. D a n, R. L a F a r i n a. Arin-Berd: Una fortezza dell'età del ferro nella valle dell'Arasse.– "L'Unione; Bollettino della Unione storia ed arte", 6, 2012, p. 254.

[112] R. B a d a l j a n, P h. K o h l, D. S t r o n a c h, A. T o n i k j a n. Preliminary Report on the 1993 Excavations at Horom, Armenia.– "Iran", vol. 32, 1994, p. 1.

[113] *Հ. Գ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Ա. Ա. Բ ո ր ո խ յ ա ն. նշվ. աշխ., էջ 52:*

[114] *Հ. Գ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Արագած (Ուրարտական ամրոցի պեղումներ). Երևան, 2001, էջ 9: Հմմտ.* К. Л. О г а н е с я н. Урартское поселение в селе Арагац.– «Известия» Академии наук Армянской ССР, 1958, № 4, с. 80; *Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 101:*

[115] C h. A. B u r n e y, G. R. L a w s o n. Measured Plans of Urartian Fortresses.– "Anatolian Studies", vol. 10, 1960, p. 180; O. B e l l i. The Anzaf Fortress and the Gods of Urartu, p. 16.

[116] T. T a r h a n, V. S e v i n. Van Bölgesinde Urartu Araştırmaları (I)..., pp. 287ff., Fig. 2, Pl. XX.

[117] R. B i s c i o n e. Pre-Urartian and Urartian Settlement Patterns in the Caucasus, Two Case Studies: The Urmia Plain, Iran, and the Sevan Basin, Armenia.– Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond. Los Angeles, 2003, p. 171.

Թորքի Թափայի շուրջը սփռված բնակատեղին՝ մոտ 9 հա[118]: Ընդամենը 8 հա մակերես էր զբաղեցնում Լիվարի ուրարտական ամրոցի "արտաքին քաղաք"-ը. այնքան՝ որքան ամրացված "ստորին քաղաք"-ն էր[119], ընդհանուրը, այսպիսով, կազմելով մոտ 16 հա: Մոտ 8–9 հա մակերես է ունեցել Գործոթի ամրոցի "արտաքին քաղաք"-ը[120], իսկ Ալիլերի ամրոցին մերձակա բնակատեղիի մակերեսը՝ մոտ 4 հա էր[121]: Վերախրամի խոշոր ամրոցին կից բնակատեղիի օգտակար մակերեսը կազմում էր ընդամենը 3.5 հա[122]:

Միայն երեք կենտրոն են ունեցել 50 հա-ից ավելի տարածք, այն է՝ Այանցը, Տուշպան և Արգիշթիխինիլին: Դրանցից Այանցի "արտաքին քաղաք"-ը զբաղեցնում է մոտ 80 հա տարածք[123]: Ամենայն հավանականությամբ՝ նույն մակերեսն է ունեցել մայրաքաղաք Տուշպան, թեև նրա "արտաքին քաղաք"-ի զբաղեցրած տարածքի համար որևէ տվյալ առայժմ չունենք: Պարզապես, եթե համարենք, որ հին Վանի քաղաքային պարիսպներն անցկացվել են հնագույն ուրարտական պարիսպների շրջագծով, ինչը հնարավոր է, ապա կարող ենք ենթադրել, որ Տուշպայի "ստորին քաղաք"-ը զբաղեցնելու էր մոտ 50 հա տարածք[124]: Դրան գումարելով "Տուշպա-հյոյուք"-ի տարածքը և, թերևս, հարակից որոշ արվարձաններ[125], ապա կարելի է կարծել, որ, ընդ-

---

[118] W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze in Iran: A. Architektur (Stand der Forschung Herbst 1976)…, S. 62–63, Abb. 11.

[119] W. K l e i s s. Bericht über Erkundungsfahrten in Nordwest-Iran im Jahre 1970.– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", Bd. 4, 1971, S. 55sqq., Abb. 8; *Նույնի՝* Urartäische Plätze in Iran (Stand der Forschung Herbst 1975), S. 42; W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze in Iran: A. Architektur (Stand der Forschung Herbst 1976)…, S. 55sqq., Abb. 2–3, 57.

[120] T. T a r h a n, V. S e v i n. Van Bölgesinde Urartu Araştırmaları (I)..., s. 285 vd., Res. 1, Tab. X.

[121] V. S e v i n. Son Tunç/Erken Demir Çağ Van Bölgesi Kronolojisi: Kökeni Aranan Bir Devlet-Urartu.– "Belleten", Cilt 68(252), 2004, s. 373.

[122] W. K l e i s s. Planaufnahmen urartäischer Burgen und Neufunde urartäischer Anlagen in Iranisch-Azerbaidjan im Jahre 1973.– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", Bd. 7, 1974, S. 87sq.

[123] A. Ç i l i n g i r o ğ l u. Ayanis.– Ege Üniversitesi Arkeoloji Kazıları. İzmir, 2012, s. 18ff., Res. 23; E. C. S t o n e, P. Z i m a n s k y. Urartian City Planning at Ayanis.– A View from the Highlands: Archaeological Studies in Honour of Charles Burney. Louvain, 2004, pp. 233ff.

[124] *Հին Վան քաղաքի մակերեսը հաշվվում է մոտ 46 հա. տե՛ս* E. K o n y a r, C. A v c ı. Van Tuşpa Excavations 2013/Van Tuşpa ههalışmaları 2013.– "Colloquium Anatolicum", vol. 13, 2014, p. 205.

[125] *Ամփոփ տե՛ս* M. T. T a r h a n. Median and Achaemenid Periods at Tuşpa.– The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-Fourth Centuries

հանուր առմամբ, Տուշպայի քաղաքային թաղամասերը զբաղեցնելու էին առավելագույնը մոտ 80–90 հա տարածք: Ինչ վերաբերում է Արգիշթիխինիլի-Արմավիրին, ապա չափազանցված է թվում այն ենթադրությունը, որ քաղաքը զբաղեցրել է գրեթե 1000 հա տարածք[126]: Կ. Ղաֆադարյանի ենթադրությունը, ըստ որի՝ Արգիշթիխինիլի-Արմավիրը կարող էր զբաղեցնել մոտ 400 հա մակերես[127], թեև շատ ավելի իրատեսական է, սակայն, այնուամենայնիվ, նույնպես հավանական չէ: Ինչ խոսք, ենթադրելի է, որ Արգիշթիխինիլի-Արմավիրը մյուս ուրարտական կենտրոնների համեմատությամբ կարող էր զբաղեցնել ավելի ընդարձակ տարածք և ունենալ համեմատաբար մեծաթիվ բնակչություն՝ հաշվի առնելով քաղաքի դիրքը երկրագործական բարեբեր գոտում: Սակայն, այնուամենայնիվ, չենք կարծում, որ այն կարող էր զբաղեցնել 100–120 հա-ից ավելի տարածք[128], միգուցե՝ անգամ ավելի քիչ: Այստեղ նկատի ունենք այն հանգամանքը, որ քաղաքի երկու՝ Արևմտյան և Արևելյան ամրոցների միջև ձգվող հատվածում բացված երեք թաղամաս ընդգրկել է ոչ ավելի, քան 50–60 հա տարածք[129]:

Ուրարտական մնացյալ կենտրոնների և ամրոցների "քաղաքային թաղամասեր"-ը կամ կից բնակատեղիները զբաղեցնում էին շատ ավելի համեստ տարածքներ: Եվ, վերջապես, նշենք, որ ուրարտական խոշոր կենտրոններից առնվազն չորսը՝ Հայկաբերդը, Ալթընթեփեն, Թոփրաքքալեն և Քեֆ Քալեն, ընդհանրապես չեն ունեցել "արտաքին քաղաք" կամ, գոնե առայժմ, դրանք փաստագրված չեն հնագիտորեն: Քեֆ Քալեն, սակայն, ուներ "ստորին քաղաք", որը պարսպապատ էր և զբաղեցնում էր 10 հա տարածք[130]:

B.C.), Papers Presented at the International Workshop, Istanbul, 20-21 May, 2005. İstanbul, 2007, p. 118.

[126] А. А. Мартиросян. К социально-экономической структуре города Аргиштихинили.– «Советская археология», 1972, № 3, с. 39; *նույնի* Аргиштихинили, с. 24*: Սկզբնապես նա նշում էր 400–500 հա տարածք (տե՛ս* А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 233; *Նույնի* Раскопки Аргиштихинили.– «Советская археология», 1967, № 4, с. 222. *Հմմտ., միաժամանակ, Կ. Լ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 94):*

[127] К. Кафадарян. Новые данные по архитектуре Урарту, с. 237.

[128] *Հմմտ.* E. Hammer. Highland Fortress-Polities and Their Settlement Systems in the Southern Caucasus.– "Antiquity", vol. 88 (341), 2014, p. 768.

[129] *Տե՛ս* А. А. Мартиросян. К социально-экономической структуре города Аргиштихинили, с. 41.

[130] P. E. Zimansky. The Cities of Rusa II and the End of Urartu.– Anatolian Iron Ages 5. The Proceedings of the Fifth Anatolian Iron Ages Colloquium held at Van, 6-10 August 2001. Ankara, 2005, p. 237.

Բիայնիլի-Ուրարտուում ոչ մի տեղ չենք հանդիպում այնպիսի մի բնակավայրի, որը կենթադրեր շատ թե քիչ հոծ բնակչության կենտրոնացում համեմատաբար սահմանափակ տարածքում՝ "պալատ-տաճար"-ում կամ "միջնաբերդում", "պալատ-տաճար"-ից դուրս ընկած և պարիսպներով շրջապատված "ստորին քաղաք"-ում կամ պարիսպներից դուրս սփռված "արտաքին քաղաք"-ում: Ընդհակառակը, առկա տվյալները հուշում են, որ պարիսպներից դուրս սփռված և բավական ազատ կառուցապատում ունեցող "քաղաքային" թաղամասի բնակիչներն ամրոցի վարչակազմի, կայազորի կամ սպասարկող անձնակազմի անդամներ էին, որոնց կեցությունը հոգում էր պետությունը[131]: Այսինքն՝ քաղաքային կյանք, որը կենթադրեր ինքնավար համայնք, որի անդամները կարող էին ունենալ սեփականություն և այն ինքնուրույն տնօրինելու իրավունք, ինչպես նաև զբաղվել ազատ տնտեսական գործունեությամբ, քաղաք, որը կունենար իր հրապարակ(ներ)ը, շուկաները, տաճարները և այլն, ուրարտական քաղաքների դեպքում տեսանելի չէ: Դրանով պայմանավորված՝ ուրարտական խոշոր կենտրոնների "քաղաքային թաղամասեր"-ն ունեցել են սահմանափակ տարածք, աչքի չեն ընկնում խիտ կառուցապատումով, չունեն հրապարակ / շուկա, տաճար(ներ) / սրբարան(ներ), իսկ բնակչությունը կամ առնվազն բնակչության զգալի մասը չի վարել սեփական տնտեսություն:

Ասվածի լավագույն օրինակն է Բաստամ քաղաքը: Ուրարտական այս խոշոր կենտրոնը, որի պարսպապատ գոտին զբաղեցնում է մոտ 30 հա տարածք, ունեցել է ոչ ավելի, քան 600–700 մարդու հասնող կայազոր և վարչակազմ: Բաստամի "արտաքին քաղաք"-ն ընդգրկում է մոտ 18 հա տարածք[132], զուրկ էր ամրություններից և թեև համեմատաբար խիտ էր կառուցապատված, սակայն, բացված կացարանները կարող էին ընդունել ոչ ավելի, քան ևս մոտ 700–800 բնակիչ, ներառյալ՝ կանայք ու երեխաները: Ըստ այդմ, Բաստամի ողջ բնակչությունը՝ ներառյալ կայազորը և վարչակազմը, ենթադրվում է առավելագույնը մոտ 1500 մարդու սահմաններում[133]: Ստացվում է, որ բնակչության միջին խտությունը կազմել է 1 հա-ի վրա 30–40 մարդ: Եթե, իրոք, մոտ 18 հա զբաղեցնող "արտաքին քաղաք"-ում ապրել է մինչև 800

---

[131] В. С. С о р о к и н. Археологические данные для характеристики социально-экономического строя Урарту.– «Вестник древней истории», 1952, № 2, с. 128 сл.; А. А. М а р т и р о с я н. К характеристике города Тейшебаини, с. 83.

[132] W. K l e i s s. Ausgrabungen in der urartäischen Festung Bastam (Rusahinili) 1970.– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", Bd. 5, 1972, S. 34ff., Abb. 28-29; *Նույնի* Die Architektur, S. 19–20.

[133] W. K l e i s s. Bastam, an Urartian Citadel Complex…, p. 301.

մարդ, ապա բնակչության խտությունը կկազմի միջինը 39–45 մարդ 1 հա-ի վրա: Սակայն անգամ Բաստամի դեպքում այս թիվը գերագնահատված է թվում, եթե նկատի ունենանք, որ "արտաքին քաղաք"-ում հաշվվում է ոչ ավելի, քան 50–60 տուն, միջինը՝ 3–4 տուն 1 հա-ի վրա: Մեկ տան համար ենթադրվող բնակիչների թիվը, այս դեպքում, անցնում է 10-ը, ինչը քիչ է հավանական[134]*:*

Արգիշթիխինիլի-Արմավիրի երկու միջնաբերդերի միջև ընկած և գրեթե 3.5 կմ ձգվող և շուրջ 50–60 հա զբաղեցնող տարածության վրա նշմարվող երեք թաղամասում վկայված են ոչ ավելի, քան 50 առանձնատուն՝ դասավորված երկու ամրոցը կապող գլխավոր փողոցի երկայնքով (աղ. II, նկ. 5)[135]*: "Վերնախավի տների" խտությունը կազմում է 1 հա-ի համար 1 տնից պակաս: Համեմատության համար նշենք, որ միտաննական շրջանում մոտ 4.4 հա զբաղեցնող Նուզիում տաճարից և պալատից բացի եղել է ընդամենը 40-ից քիչ ավելի տուն*[136]*: Այսինքն, գրեթե նույն պատկերն է, ինչ ունենք Արգիշթիխինիլի-Արմավիրի դեպքում, պարզապես, տարբերությունը կառուցապատման խտության մեջ էր. այն բարձր էր Նուզիում՝ 1 հա-ի վրա կազմելով մոտ 10 տուն, և իր խտությամբ անհամեմատելի էր Արգիշթիխինիլի-Արմավիրի հետ:*

Գործոթի ամրոցին կից բնակատեղիի՝ առավել լավ պահպանված հատվածում (մոտ 1 հա) փաստագրված և բավական խիտ կառուցապատում ունեցող կացարանների թիվը կարելի է հաշվել 10-ի մոտ[137]*: Յուրաքանչյուր*

---

[134] *Մեկ ընտանիքում անդամների թվի համար տե՛ս* F. A. M. Wiggermann. Agriculture in the Northern Balikh Valley: The Case of Middle Assyrian Tell Sabi Abyad.– Rainfall and Agriculture in Northern Mesopotamia, Proceedings of the Third MOS Symposium (Leiden 1999). Leiden, 2000, p. 190 (4 *անձ*). *Հմմտ. նաև* J. R. Zorn. Estimating the Population Size of Ancient Settlements: Methods, Problems, Solutions, and a Case Study.– "Bulletin of the American Schools of Oriental Research", vol. 295, 1994, p. 33 (*միջինը՝ 4–5.5 անձ*)*: Ուգարիթում մեկ ընտանիքի անդամների միջին թիվը կազմում է 5.25 անձ (տե՛ս* W. R. Garr. A Population Estimate of Ancient Ugarit.– "Bulletin of the American Schools of Oriental Research", vol. 266, 1987, pp. 31ff. *Տե՛ս նաև* R. McC. Adams. Heartland of Cities. Survey of Ancient Settlement and Land Use on the Central Floodplain of the Euphrates. Chicago, London, 1981, p. 144.

[135] А. А. Мартиросян. Аргиштихинили, с. 104; *Կ. Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 35–39, գծ. 8–9:*

[136] M. P. Maidman. Nuzi: Portrait of An Ancient Mesopotamian Provincial Town.– Civilizations of the Ancient Near East, vol. 2. New York, 1995, p. 937.

[137] T. Tarhan, V. Sevin. Van Bölgesinde Urartu Araştırmaları (I)..., s. 285 vd., Res. 1, Tab. X.

կացարանի / ընտանիքի համար միջինը հաշվելով 5 բնակիչ և կառուցապատման նույն խտությունը ենթադրելով նաև մյուս հատվածների համար՝ 8–9 հա զբաղեցնող բնակավայրի համար մենք կունենանք մոտ 400–450 բնակիչ: Մինչև 10 հա զբաղեցնող բնակավայրի համար որպես զուգահեռ կարող ենք նշել Բաձիրու քաղաքի օրինակը (Թելլ Բազի): Միտաննական դարաշրջանի այդ բնակավայրը բաղկացած էր միջնաբերդից (ուր գտնվում էր տաճարը) և դրա ստորոտին սփռված "արտաքին քաղաք"-ի երկու թաղամասից: Այսպես կոչված, Weststadt-ի պեղված հատվածում (մոտ 4 հա) բացվել է նույնատիպ կառուցվածքով բավական խիտ կառուցապատում ունեցող 50 տուն (ողջ բնակավայրն ունեցել է մոտ 75–80 տուն): Այսինքն, մեկ հա-ի վրա միջինը կազմում է 12–13 տուն՝ հաշվի առնելով նաև փողոցների զբաղեցրած տարածքը և բավական ընդարձակ հրապարակի առկայությունը[138]: Նման թաղամասը հազիվ թե ունենար 400–500-ից ավելի բնակչություն[139]:

Ուրարտական բնակավայրի բնութագրական օրինակ է Դուչգազին: Հիմնական բնակատեղին զբաղեցնում է 360 ՃՃ 260 մ տարածք, երեք կողմից գտնվում է եռանկյունաձև դարավանդի վրա, իսկ միակ մատչելի՝ հարավային կողմից պաշտպանված էր 95 մ ձգվող և որմնահեցերով ամրացված պարսպով: Հիմնական բնակատեղիի մուտքը փակող պարիսպներից դուրս սփռված էր "արվարձան"-ը՝ 360 ՃՃ 115 մ մակերեսով[140]: Ընդհանուր առմամբ՝ մոտ 7 հա մակերես[141] զբաղեցնող բնակատեղին ունեցել է մոտ 50 տուն՝ շուրջ 300 բնակչով[142]: Միջինը՝ մոտ 43 մարդ մեկ հա-ի համար և 7 տուն յուրաքանչյուր հա-ի վրա: Եվ դա, նկատի ունենալով, որ բնակավայրը, ինչպես Գործոթը, ցուցաբերում է խիտ կառուցապատում:

---

[138] A. O t t o. The Late Bronze Age Pottery of the 'Weststadt' of Tell Bazi (North Syria).– Recent Trends in the Study of Late Bronze Age Ceramics in Syro-Mesopotamian and Neighbouring Regions; Proceedings of the International Workshop in Berlin, 2–5 November 2006. Rahden/Westf., 2014, p. 85f.

[139] *Հմմտ. նաև* A. W o s s i n k. Challenging Climate Change. Competition and Cooperation among Pastoralists and Agriculturalists in Northern Mesopotamia (c. 3000–1600 BC). Leiden, 2009, p. 58.

[140] W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze und Anlagen des 2.-1. Jahrtausend v. Chr. in Iran: A. Architektur, B. Die Oberflächenfunde.– "Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge", Bd. 11, 1978, S. 36sqq.

[141] *Բնակատեղիի զբաղեցրած տարածքի համար տե՛ս* P. E. Z i m a n s k y. Ecology and Empire, p. 35, Tab. 2.

[142] W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze und Anlagen des 2.-1. Jahrtausend v. Chr. in Iran, S. 41.

Ուրարտական բնակավայրի մյուս օրինակը Կալ'աթն է[143]*: Միջնաբերդի շուրջը սփռված բնակավայրը զբաղեցնում է մոտ 3.5 հա մակերես (255 ՃՃ 135 մ)*[144]*: Այստեղ պեղված մի քանի տների՝ միմյանց նկատմամբ ունեցած հեռավորությունից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ բնակավայրն ունեցել է 20–25 տուն՝ ոչ ավելի, քան 120–150 մարդու հասնող բնակչությամբ*[145]*:*

Ք. ա. VIII դ. թվագրվող Կալ'եհ Քամանայի բնակատեղին զբաղեցնում է մոտ 1.5 հա (150 ՃՃ 105 մ) մակերես[146]*: Փոքր բնակատեղի է՝ բիայնական դղյակ-ամրոցի շուրջը սփռված ընդամենը հինգ բնակելի համալիրով: Ունեցել է մինչև 50 բնակիչ*[147]*:*

Եթե ամփոփենք, ապա տեսնում ենք, որ ուրարտական որևէ կենտրոն աչքի չի ընկնում տների խիտ կառուցապատումով, քաղաքային թաղամասերի տարածքի զգալի մասը զբաղեցնում էին առանձին կանգնած վերնախավի տները և վստահաբար կարելի է պնդել՝ 1 հա-ի համար 4–5 տուն և 20–30 բնակիչ միջինացված հաշվարկը կարող է լինել միանգամայն իրատեսական (հմմտ. Բաստամի օրինակը): Ուրարտական քաղաքների բնակելի թաղամասերի որոշ հատվածների և փոքր բնակավայրերի համար այդ թիվը կարող էր աճել՝ հասնելով մինչև 8–10 տան և 40–50 բնակչի: Որպես միջինացված թիվ, ըստ այդմ, կարելի է ընդունել 1 հա-ի վրա 6–8 տուն և 30–40 բնակիչ հաշվարկը: Մինչդեռ միջագետքյան քաղաքներում բնակչության խտությունը 1 հա-ի վրա տատանվում էր 100-ից 500 մարդու միջև՝ հաշվի առնելով կառուցապատման խտությունն ու տների հարկայնությունը, դրանց բնակելի մակերեսը, բնակավայրի բնակելի հատվածի մակերեսը, երկրագործական տարածքի հնարավորություններն ու ջրային ռեսուրսները[148]*:*

---

[143] W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze und Anlagen des 2.-1. Jahrtausend v. Chr. in Iran, S. 41sqq., Abb. 17.

[144] *Բնակատեղիի մակերեսը 4.1 հա է ներկայացնում Փոլ Զիմանսկին. (տե՛ս* P. E. Z i m a n s k y. *Նշվ. աշխ., էջ 35, աղ. 2):*

[145] Y. H. G r e k y a n. The Settlement Size and Population Estimation of the Urartian Cities, pp. 122–124.

[146] *Բնակատեղիի մակերեսը 0.94 հա է ներկայացնում Փոլ Զիմանսկին (տե՛ս* E. Z i m a n s k y. *Նշվ. աշխ., էջ 35, աղ. 2):*

[147] W. K l e i s s, S. K r o l l. Urartäische Plätze und Anlagen des 2.–1. Jahrtausend v. Chr. in Iran, S. 51.

[148] *Մանրամասն տե՛ս և հմմտ.* J. R. Z o r n. *Նշվ. աշխ., էջ 31–48, աղ. 1:*

Որպես միջին ցուցանիշ՝ ընդունվում է 1 հա-ի վրա 100–200 մարդ հաշվարկը[149]: Ինչ խոսք, ուրբանիզացիայի բարձր մակարդակ ունեցող սիրիամիջագետքյան քաղաքների համար այս պատկերը ոչ մի կերպ չի կարելի համադրել ուրարտական իրողությունների հետ:

Եթե առաջնորդվենք այս, այնուամենայնիվ, պայմանական հաշվարկով, ապա Կարմիր-բլուրի քաղաքային թաղամասերի համար, որոնք զբաղեցրել են մոտ 40 հա տարածք (տե՛ս վերը), կարող ենք ենթադրել ոչ ավելի, քան 1200–1600 բնակիչ: Այդ թվին, թերևս, պետք է հավելել Կարմիր-բլուրի միջնաբերդում տեղակայված կայազորի զինվորների, ուրարտական վարչակազմի, քրմության ներկայացուցիչների ու սպասարկող անձնակազմի թիվը: Վերջիններիս զգալի մասը, անկասկած, բնակվել է ամրոցից դուրս ընկած "քաղաքային թաղամաս"-ում:

Նրանց թիվը մեծ չէր լինելու: Կարմիր-բլուրի միջնաբերդը զբաղեցնում է մոտ 4 հա տարածք՝ ներառյալ ընդարձակ ներքին բակը: Եթե հաշվի առնենք այստեղ պետական արհեստանոցների, պահեստների, մառանների և մթերանոցների զբաղեցրած ընդարձակ տարածքներն ու ամրոցի առաջին (նկուղային) հարկում բնակելի գոտու բացակայությունը, որը գտնվել է, ամենայն հավանականությամբ, ամրոցի երկրորդ հարկում, ապա տեսնում ենք, որ ամրոցի բնակելի գոտին կարող էր կազմել ոչ ավելի, քան 1 հա տարածք: Առավել ևս, հարկ է նկատի ունենալ, որ այդտեղ էր գտնվում "սուսի"-

---

[149] R. M c C. A d a m s. Land Behind Baghdad. Chicago, London, 1965, p. 41; *Նույնի՝* Heartland of Cities, pp. 69, 144; H. T. W r i g h t. The Administration of Rural Production in an Early Mesopotamian Town. Ann Arbor, 1969, p. 39; W. R. G a r r. *Նշվ. աշխ., էջ 39;* H. K ü h n e. The Effects of Irrigation Agriculture: Bronze and Iron Age Habitations along the Khabur, Eastern Syria.– Man's Role in the Shaping of the Eastern Mediterranean Landscape, Proceedings of the INQUA/BAI Symposium on the Impact of Ancient Man on the Landscape of the Eastern Mediterranean Region and the Near East, Groningen / Netherlands / 6–9 March, 1989. Rotterdam, 1990, p. 19; G. v a n D r i e l. The Size of Institutional Umma.– "Archiv fЭr Orientforschung", Bd. 46-47, 1999–2000, p. 83, n. 22; J. C a s a n a. Alalakh and the Archaeological Landscape of Mukish: The Political Geography and Population of a Late Bronze Age Kingdom.– "Bulletin of the American Schools of Oriental Research", Bd. 353, 2009, p. 30.

Աղյուսակ II





տաճարը և նահանգային կառավարչի հարկաբաժինները[150]: Ըստ այդմ, կարելի է ենթադրել, որ բուն ամրոցում միաժամանակ կարող էին բնակվել լավագույն դեպքում մեկ-երկու հարյուր մարդուց ոչ ավելի: Որպես օրինակ կարող ենք վերցնել Թելլ Սաբի Աբյադի (հյուսիս-կենտրոնական Սիրիա) ժառոս-ամրոցը, որը միջինասորեստանյան շրջանում Ասորեստանի Խանիգալբատ (Միտաննի) նահանգի ռազմավարչական կենտրոններից մեկն էր: Այն զբաղեցնում էր 0.36 հա տարածք (60 Ճ 60 մ), ուներ հանդիսությունների սրահ, մառաններ, արհեստանոցներ և բնակելի սենյակներ, իսկ ամրոցում ապրել է, ինչպես ենթադրվում է, առավելագույնը 60 մարդ՝ ներառյալ կանայք ու երեխաներ[151]: Միջինասորեստանյան դարաշրջանի մեկ այլ ժառոս՝ Թելլ ալ-Ֆաքարը, որը զբաղեցնում է մոտ 0.15 հա մակերես, ունեցել է շուրջ 40–45 մարդ բնակչություն[152]: Այս առումով ուրարտական լավագույն զուգահեռը հայտնի է Գիրիքթեփեի դղյակ-ապարանքից: Այստեղից հայտնաբերվել է 44 մարդու աճյուն[153], որոնք զոհվել են ապարանքի գրավման ժամանակ: Նրանց շարքում կանանց մեծ թիվը վկայում է, որ գործ ունենք ապարանքի բնակիչների հետ: Այս զուգահեռները նկատի ունենալով՝ կարելի է կարծել, որ Կարմիր-բլուրի ընդհանուր բնակչությունը կարող էր կազմել առավելագույնը 1800–2000 մարդ:

Համեմատության համար նշենք, որ Նուզին իր արվարձաններով ունեցել է մոտ 1600 բնակիչ[154], և դա այն դեպքում, երբ քաղաքի տարածքը կազմում էր այնքան, որքան միայն Կարմիր-բլուրի "միջնաբերդ"-ն էր (մոտ 4 հա). մինչդեռ, Կարմիր-բլուրի ողջ մակերեսը Նուզիին գերազանցում էր գրեթե տասն անգամ:

Արգիշթիխինիլի-Արմավիրի զբաղեցրած տարածքի համար ենթադրվող առավել իրատեսական թվերը հիմք ընդունելու դեպքում անգամ ուրարտական այս կենտրոնի բնակչությունը հազիվ թե գերազանցեր 3–4 հազ-ը: Այդ առումով արտահայտված կարծիքը, ըստ որի՝ Արգիշթիխինիլի-Արմավիրն ունենալու էր մոտ 30 հազ. բնակչություն, նույնպես իրատեսական չէ[155]: Այդ նույնը վերաբերում է Տուշպային: Ընդունելով անգամ, որ պարսպապատ "ստորին քաղաք"-ից դուրս սփռվել են "արտաքին քաղաք"-ի ընդարձակ թաղամասերը՝ բոլորելով Վանա ժայռի չորս բոլորը, ապա այդ դեպքում անգամ քաղաքի բնակչության համար առաջարկված 50 հազ.

---

[150] Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Ուրարտական ճարտարապետություն.– Ակնարկներ հայ արվեստի պատմության հ. 2. Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 35, Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 78–79, R. D a n. *Նշվ. աշխ., էջ 44–52:*

[151] F. A. M. W i g g e r m a n n. *Նշվ. աշխ., էջ 191:*

[152] R. K o l i ń s k i. Tell al-Fakhar: A dimtu-Settlement or the City of Kurruḫanni?.– "Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians", vol. 12, 2002, pp. 9ff.

[153] K. K ö r o ğ l u. Urartu Dönemi Bey Konakları.– Altan Çilingiroğlu'na Armağan: Yukarı Denizin Kıyısında Urartu Krallığı'na Adanmış Bir Hayat / Studies in Honour of Altan Çilingiroğlu. A Life Dedicated to Urartu on the Shores of the Upper Sea. İstanbul, 2009, p. 387.

[154] M. P. M a i d m a n. *Նշվ. աշխ., էջ 935:*

[155] А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили, с. 137.

թիվը[156] խիստ չափազանցված է: Նույնը պետք է ասել Կարմիր-բլուրի բնակչության համար ենթադրվող 20 հազ. թվի մասին[157]:

Համեմատության համար նշենք, որ խեթական տերության մայրաքաղաք Խաթթուսասի համար (181 հա) ենթադրվում է 9 հազ-ից մինչև 15 հազ. բնակչություն[158]: Ըստ ասորեստանյան աղբյուրների, արքայանիստ Կալխուի բնակչությունն Աշշուր-նաձիր-ապալ II-ի օրոք կազմում էր 16–17.5 հազ. մարդ[159], երբ քաղաքը զբաղեցնում էր 360 հա տարածք[160], որից 185 հա-ը քաղաքային կառուցապատված թաղամասերի տարածքն էր[161]: Այս դեպքում անգամ բնակչության խտությունը 1 հա-ի համար կազմում է 100 մարդուց պակաս: Հիմք ընդունելով 1 հա-ի համար 100 մարդ հաշվարկը՝ շուրջ 15 հազ. բնակչություն է ենթադրվում Նինվեի համար (150 հա) մինչև ասորեստանյան արքա Սինախերիբի իրականացրած վերակառուցումները[162] ու կարող էր հասնել ընդհուպ մինչև 75 հազ-ի՝ Սինախերիբի վերակառուցումներից և քաղաքի տարածքի խիստ ընդլայնումից հետո (750 հա)[163]: Ասորեստանյան նահանգային կենտրոններից Դուր-Կատլիմուի (մոտ 100 հա)[164] բնակչությունը կարող էր կազմել 9 հազ. մարդ[165]: Ասորեստանյան աղբյուրների վկայությամբ՝ Սարգոն II-ը նվաճված Համաթը վերաբնակեցնում է 6 հազ. 300 ասորեստանցիներով[166]: Նման պատկեր է ուրվագծվում նաև համաժամանակյա բաբելոնյան քաղաքների համար: Օրինակ՝ Բաբելոնի համար, որը զբաղեցնում էր 800 հա մակերես, բնակչության ենթադրվող նվազագույն քանակը կազմում է 80 հազ. մարդ[167]: Անգամ Ասորեստանի մայրաքաղաք Աշշուրը, որն ուներ ընդամենը 65 հա մակերես, իր ըն-

---

[156] C h. A. B u r n e y. Urartian Irrigation Works. – “Anatolian Studies”, vol. 22, 1972, p. 183.

[157] *Հմմտ. Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 94:*

[158] D. P. M i e l k e. Hittite Cities: Looking for a Concept.– Insights into Hittite History and Archaeology. Louvain, Paris, Walpole, Mass., 2011, p. 183f.

[159] A. K. G r a y s o n. Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114–859 BC). Toronto, Buffalo, London, 1991, p. 293 (A.0.101.30: 147–148). *Տե՛ս նաև* T. J. W i l k i n s o n, E. B. W i l k i n s o n, J. U r, M. A l t a w e e l. Landscape and Settlement in the Neo-Assyrian Empire.– “Bulletin of the American Schools of Oriental Research”, vol. 340, 2005, p. 26.

[160] D. O a t e s. Studies in the Ancient History of Northern Iraq. London, 1968 (reprinted in 2005), p. 42.

[161] J. A. U r. The Morphology of Neo-Assyrian Cities.– “Subartu”, vol. 6–7, 2013, p. 14.

[162] D. S t r o n a c h. Village to Metropolis: Nineveh and the Beginnings of Urbanism in Northern Mesopotamia.– Nuove Fondazioni nel Vicino Oriente Antico: Realità e Ideologia. Pisa, 1994, p. 99.

[163] D. O a t e s. *Նշվ. աշխ., էջ 43,* D. S t r o n a c h. *Նշվ. աշխ., էջ 100–104:*

[164] *Թելլ Շեյխ Խամադ հնավայրը հյուսիսային Սիրիայում:*

[165] H. K ü h n e. The Effects of Irrigation Agriculture, p. 19.

[166] J. D. H a w k i n s. The New Sargon Stele from Hama.– From the Upper Sea to the Lower Sea. Studies on the History of Assyria and Babylonia in Honour of A. K. Grayson. Leiden, 2004, p. 160f.

[167] O. P e d e r s é n, P. J. J. S i n c l a i r, I. H e i n, J. A n d e r s s o n. Cities and Urban Landscapes in the Ancient Near East and Egypt with Special Focus on the City of Babylon.– The Urban Mind. Cultural and Environmental Dynamics. Upsala, 2010, p. 136.

դարձակ տաճարային և պալատական համալիրներով հանդերձ կարող էր ունենալ շուրջ 9 հազ. բնակչություն[168]: 8 հազ. բնակիչ է ենթադրվում արվարձաններով հանդերձ մոտ 100 հա զբաղեցնող Երուսաղեմի համար նախքան Սինախերիբի Ք. ա. 701 թ. արշավանքը դեպի Պաղեստին[169]: Կերկենես Դաղի փոյուգական խոշոր բնակավայրը, ենթադրվում է, կարող էր ունենար շուրջ 18.5–23 հազ. բնակչություն, որն իրատեսական է թվում մոտ 250 հա զբաղեցնող քաղաքի համար[170]:

Ակնհայտ է, որ Բիայնիլի - Ուրարտուում քաղաքաշինական միտքը կաղապարայնացած էր, թելադրվում էր բացառապես պալատից / տաճարից և, ինչպես կարծում ենք, պայմանավորված էր նրա պալատական / տաճարային տիպի պետության բնույթով՝ վերաբաշխման համակարգի վրա հիմնված տնտեսությամբ: "Քաղաք"-ն էր համակարգում տվյալ գոտու տնտեսական կյանքը, իսկ դրանց իրականացրած գործառույթների միջև տարբերություններ չեն նկատվում: Ըստ այդմ, ուրարտական "քաղաք"-ների միջև չկան նաև տիպաբանական առանձնահատկություններ:

Ուրարտական "քաղաք"-ի կենտրոնական կառույցն ամրացված "պալատ-տաճար"-ն էր: Այն աչքի էր ընկնում մոնումենտալ ճարտարապետությամբ, ուներ "սուսի"-տաճար և "պալատական" տիպի համալիր ("հանդիսությունների սրահ"), այստեղ էին կենտրոնացվում պետական պահուստները, գործում էր ուրարտական վարչակազմը ու որպես կանոն՝ առօրյա գրագրության օրինակները հայտնաբերվել են նման կենտրոններից:

Ուրարտական քաղաքն ուներ սահմանափակ տարածք և բնակչություն: Վերջինիս թիվն ուղիղ համեմատական էր տվյալ կենտրոնի իրականացրած գործառույթների հետ, իսկ "բնակչություն"-ը սպասարկում էր "քաղաք"-ը[171]: Ըստ այդմ, ուրար-

---

[168] *Հմմտ. նաև* M. L i v e r a n i. From City-State to Empire: The Case of Assyria.– The Roman Empire in Context: Historical and Comparative Perspectives. Chichester, Malden, Mass., 2011, p. 253.

[169] H. G e v a. Jerusalem's Population in Antiquity: A Minimalist View.– "Tel Aviv", vol. 41/2, 2014, p. 141.

[170] G. D. S u m m e r s, F. S u m m e r s. Aspects of Urban Design at the Iron Age City on the Kerkenes Dağ as Revealed by Geophysical Survey.– "Anatolia Antiqua", vol. 14, 2006, p. 80.

[171] *Տե՛ս և հմմտ.* Г. Е. А р е ш я н. О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе.– ИФЖ, 1974, № 2, с. 208 сл.; *Նույնի՝* Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков.– «Научные сообщения Государственного музея искусства народов Востока», 1978, вып. 10, с. 91–108; R. B i s c i o n e. Pre-Urartian and Urartian Settlement Patterns…, pp. 183–184. *Հայկական լեռնաշխարհում "քաղաք" հասկացության և քաղաքագոյացման հարցի շուրջ տե՛ս և հմմտ. նաև* A. T. S m i t h. Late Bronze/Early Iron Age Fortresses of the Ararat and Shirak Plains, Armenia: Typological Considerations.– "Ancient Civilizations from Scythia to Siberia", vol. 5/2, 1998, p. 74, n. 3; *Նույնի՝* The Political Landscape, pp. 241ff.; *Հ. Գ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Ա. Ա. Բ ո ր ո խ յ ա ն. նշվ. աշխ., էջ 113 հաջորդիվ, Ա. Ա. Բ ո ր ո խ յ ա ն. Քաղաքագոյացման գործընթացները նախաուրարտական Հայաստանում (պարբերացման փորձ), էջ 40–75, նույնի՝ Կիրխու.*

տական որևէ կենտրոն ո՛չ տարածքով, ո՛չ բնակչությամբ համադրելի չէ իր ժամանակաշրջանի սիրիամիջագետքյան քաղաքների հետ, բայց, փոխարենը, հյուսիսսիրիական – հյուսիսմիջագետքյան կամ այլ կերպ ասած՝ միտաննական / միջինասորեստանյան քաղաքաշինական ժառանգության կրողն էր:

Սա մղում է մտածելու, որ Բիայնիլի – Ուրարտուում քաղաքաշի-նությունը Հայկական լեռնաշխարհում վաղ երկաթի դարում դի-տարկվող քաղաքագոյացման գործընթացի շարունակությունը չէր: Ընդհակառակը, այդ գործընթացն ընդհատվել է ուրարտական ներխուժումներով, իսկ դրանց հաջորդած ուրարտական տիրապետության հաստատումը Հայկական լեռնաշխարհի մի զգալի հատվածում հանգեցրել է վաղերկաթեդարյան "քաղաքներ"-ի վախճանին:

ГРАДОСТРОИТЕЛЬСТВО И ГРАДОСТРОИТЕЛЬНАЯ МЫСЛЬ В БИАЙНИЛИ – УРАРТУ

ЕРВАНД ГРЕКЯН

Резюме

Осью, вокруг которой в Биайнили – Урарту образовывался урартский «город», являлся храм- (Й)*susi*. После храма второй важной составной частью «города» был так называемый комплекс «дворцового» типа – просторный тронный или торжественный зал, украшенный колоннами или пилонами (вероятно, строение É*ašḫusi*). Возможно, что этот комплекс или, иначе говоря, «дворец-храм» назывался É.BÁRA. Как правило, É.BÁRA окружался мощными крепостными стенами и превращался в крепость — É.GAL. Вместе с обслуживающим его «внешним городом» или прилегающим населенным пунктом этот комплекс составлял «город». Эта картина характерна для всех урартских крупных центров городского типа.

Урартский город располагался на ограниченной территории, и в нем проживало ограниченное число людей. Численность населения была прямо пропорциональна тем функциям, которые осуществлял данный центр, и не превосходила несколько тысяч человек. Ни один урартский город несопоставим с сиро-месопотамскими городами своей эпохи ни по территории, ни по населению. Вместе с тем, наблюдаются типологические общности с северосирийскими-северомесопотамскими градостроительными традициями 2-й половины II тыс. до н. э. Сиро-месопотамский город данной эпохи также состоял из цитадели (àêê. *ki/eṇu*), где находился храм, а на склонах цитадели простирался лишенный оборонных сооружений «нижний город» (àêê. *adaššu*).

Можно утверждать, что градостроительная мысль Биайнили–Урарту была стереотипной, направляемой исключительно из дворца/храма, и была обусловлена характером государства дворцового/храмового типа с экономикой, основанной на системе перераспределения.

Это побуждает думать, что урартское градостроительство не являлось продолжением градообразовательных процессов на Армянском нагорье в доурартскую эпоху. Наоборот, эти

ամրոց-բնակավայրի մի տեսակ Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններում և Հայկական լեռնաշխարհում, էջ 166–179:

процессы были прерваны урартскими вторжениями, а установление урартского господства ознаменовалось гибелью «городов» раннего железного века на значительной части Армянского нагорья.

THE CITY-BUILDING AND TOWN-PLANNING MINDSET IN BIAINILI–URARTU

YERVAND GREKYAN

Summary

In Biainili–Urartu the (É)*susi*-temple appeared to be the kernel, around which the Urartian 'city' was formed. The second important component in the 'city' after the temple is the so-called 'palatial type' complex – a large ceremonial or throne hall with columns or pillars (probably, the structure called É*ašḫusi*).

This architectural complex, or in other words the 'palace-temple', probably, was called É.BÁRA. As a rule, the É.BÁRA was surrounded by strong fortification walls and was transformed into a fortress – É.GAL. Together with the 'outer town' or a surrounding settlement (URU) this assemblage constituted the Urartian 'city'. This picture is characteristic for all Urartian large urban centres. The Urartian city had limited territory and population. The size of the latter was directly correlated to the functions carried out by that centre and did not exceed a few thousand people. None of the Urartian urban centres are comparable with the Syro-Mesopotamian urban settlements of the same period from the standpoint of the size of their territory and population. However, typological commonalities are observed with the North Syrian – North Mesopotamian traditions of urbanism of the second half of the 2nd mill. BC. The Syro-Mesopotamian town of that period was also consisted of a citadel (Akk. *ki/eṫu*), where the temple was situated, and an indefensible 'lower town' (Akk. *adaššu*) spread over the area downwards the citadel.

It is arguable that the town-planning pattern in Biainili-Urartu was stereotypical; it was dictated exclusively from the palace/temple, and was conditioned by the nature of the land conceived as a palace-temple state and its economy based on a redistribution system.

This leads us to suggest that the Urartian city-building approach can not be viewed as a continuation of the town-emergence process in the Armenian Highland during the Pre-Urartian period. On the contrary, these processes were interrupted with Urartian conquests, and the subsequent establishment of the Urartian rule ushered the end of the Early Iron Age 'towns' in considerable parts of the Armenian Highland.